



ՏԵՂԵԿԱՏՈՒ ՄՊԱՏԱՆԻ ՆԱՅՈՅ ԹԵՄԻ ԺԵ ՏԱՐԻ ԹԻՒ 119 ՄԱՐՏ-ԱՊՐԵԼ 2017



ՅԻՇՈՒՄ ԵՄ ԵՒ ՊԱՀԱՆՋՈՒՄ

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԵՒ ՇԱԽԵՆՇԱՐԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԿԵՐՏՆԵՐԻ ԲՈՂՈՔԻ ՀԱՄԱՀԱՒԱՐ-ԾԱՂԿԵՄԱՏՈՅՅԸ՝ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆԲՈՒՄ

Հայոց Ցեղասպանության 102-ամեակի ոգեկոչման ծրագրերի ծիրում, շաբաթ՝ ապրիլի 22-ի առաւօտեան ժամը 11:00-ին, Նոր Զուղայի եւ Ծախինշարի հայոց ազգ. դպրոցների աշակերտությունը ի մի եկաւ Ս. Ամենափրկչեան վանքում՝ իրականացնելու իր ամենամեայ բողոքի համահաւաքը:

արմատներով ներծծելու է աշխարհի ուժն ու սնունդը՝ որպէս նոր աւին ու աւիշ հայ ազգին փոխանցելու համար: Հայր Սուրբը ընդգծելով, որ աշակերտներին վերահսկելը միայն դպրոցների պատասխանատուների պարտականութիւնը չէ, յորդորեց ծնողներին՝ իրենց զաւակների ճիշտ ուղեցոյցը դառնալով՝ նրանց ապագայի հզօր եւ յաղթական սերունդը դարձնել:



Համահաւաքին մասնակցել էին՝ Նոր Զուղայի հայոց ազգ. մանկապարտէզ-նախակրթարանի, «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի եւ «Քանանեան» աղջկանց ու «Կատարինեան» տղայոց միջնակարգ դպրոցների, իսկ Ծախինշարի «Սրբոց Վարդանանց» տարրական եւ «Մասիս» ուղեցոյց դպրոցների աշակերտներն ու պատասխանատուները:

Վերջում աշակերտները հերթաբար իրենց մէկական ծաղիկները տեղադրեցին յուշարձանի մօտ՝ ոգեկոչելու բիրաւոր սուրբ նահատակների անմոռաց յիշատակը:

Ծրագրին ներկայ էին նաեւ քահանայից դասի, ազգային մարմինների եւ շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչները, աշակերտութեան յատկապէս շրջափակում ցուցադրած ցեղասպանութեան թեմայով աշակերտական նկարչութիւններն ու ձեռքի աշխատանքները մեծ ուշադրութեան արժանացան Ս. Ամենափրկչեան վանքի թանգարան այցելած զբօսաշրջիկների կողմից:



Միջոցառումն սկիզբ առաւ 102-ամեակի ոգեկոչման յանձնախմբի անդամուհի Մարինէ Մկրտչեանի խօսքով, որից յետոյ դպրոցներն առանձնաբար հանդէս եկան աշակերտական ելոյթներով ու յուշարձանի մօտ խորհրդանշական ծաղկեպսակների տեղադրմամբ: Ելոյթների շրջագծում Նոր Զուղայի մանկապարտէզ-նախակրթարանը ներկայացրեց խմբական ասմունք եւ երգ, «Արմէն» տարրական կրթահամալիրը՝ աշակերտական երկու խօսքեր՝ պարսկերէն եւ անգլերէն լեզուներով, «Քանանեան» եւ «Կատարինեան» դպրոցների կողմից հինչեցին մէկական ասմունք եւ անգլերէն լեզով պահանջատիրական խօսքեր, Ծախինշարի «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցները հանդէս եկան խմբական երգով, իսկ վերջում ելոյթների բաժինը եզրափակեց մի երգով՝ աշակերտների միասնական կատարմամբ:



Հարկ է նշել, որ հինգշաբթի՝ ապրիլի 20-ի առաւօտեան «Քանանեան» աղջկանց եւ «Կատարինեան» տղայոց միջնակարգ դպրոցների աշակերտ-ուհիների մասնակցութեամբ, աշակերտական աշխատանոց իրականացաւ Ս. Ամենափրկչեան վանքի շրջափակում, որտեղ ուսուցիչների գլխատրութեամբ պատրաստուեցին պատատուներ ու պատի թերթեր, զբօսաշրջիկներին բաժանուեցին Հայոց Ցեղասպանութեան իրողութիւնը բացատրող կոչեր, իսկ բարեգարդւեց վանքում գտնուող Ցեղասպանութեան յուշարձանի շրջափակը: Սոյն ծրագրի ընթացքում իրենց այցելութեամբ աշակերտներին առաւել ոգեշնչեցին գերպ. հոգեւոր հայրեր՝ Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէնեանն ու Տ. Անանիա ծ. վրդ. Գունանեանը:

Այնուհետեւ Սպահանի հայոց թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէնեանն իր հայրական պատգամը փոխանցեց ներկաներին: Նա իր վստահութիւնը յայտնեց, որ հայ աշակերտութիւնը նոր սերմի նման ոչ միայն ծլարձակուելու է հայրենիքի եւ սփիւռքի հողից, այլեւ իր

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍԱԿԱՆՈՒԹԵԱՆ 102-ԱՄԵԱԿԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱԳԾՈՒՄ ՄՈՍԵՐՈՎ ԵՐԹ ԵՒ ԲՈՂՈՔԻ ՀԱՄԱՀԱԽԱԲ

Հայոց Ցեղասպանության 102-ամեակի ոգեկոչման միջոցառումների շրջագծում, կիրակի՝ ապրիլի 23-ի երեկոյան ժամը 7:00-ին, Նոր Զուղայի Ս. Ստեփանոս եկեղեցում, Սպահանի հայոց թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչեճեանի նախագահությամբ եւ թեմիս հոգեւորականաց ու դպրաց դասերի մասնակցությամբ կայացաւ Սրբոց Նահատակացն Բարեխօսական կարգը: Արարողութեան աւարտին միասնական Տէրունական աղօթքը հնչեց առ Աստուած, որից յետոյ Հայ Սուրբի, հոգեւորականաց դասի, ազգային մարմինների անդամների եւ շրջանի Հայ Դատի յանձնախմբի գլխավորությամբ, Ս. Ստեփանոս եկեղեցուց սկիզբ առաւ մոմերով երթը: Նոր Զուղայի եւ Ծահինշահրի պահանջատէր ժողովուրդը խորհրդաւոր լուծեան ներքոյ, լուսաւոր մոմերն իր ձեռքում պահած, քայլեց դէպի Ս. Ամենափրկիչ վանքը տանող Արեւմտեան ու Արեւելեան Նազար պողոտաներով: Վանք հասնելուն պէս մոմերը տեղադրւեցին Հայոց Ցեղասպանութեան յուշարձանի մօտ, որից յետոյ տեղի ունեցաւ բողոքի համահաւաք:



Համահաւաքը բացած յայտարարեց հաղորդավար Թովմա Գալստանեանի խօսքով, ուր ասած էր. «Ճիշտ է, թրքական պետութիւնը մինչեւ օրս դեռ շարունակում է իր ժխտողական ու հայատեաց քաղաքականութիւնը, եւ երբեք չի դադարել հայութեանը վնասող գործողութիւնների իրականցումից, սակայն միակամ ոգով գործի լծած հայ ժողովրդի հայաստանեան ու սփիւռքեան հատուածները, իրենց անկտրում կամքի շնորհիւ կարողացել են վերականգնել դարեր առաջ կորցրած պետականութիւնը, պահպանել ու զարգացնել հայկական ազգային արժէքները, Սփիւռքում ստեղծել հզօր կառույցներ եւ հիմնադրել Լեոնային Ղարաբաղի Հանրապետութիւնը»:



Բացման խօսքին յաջորդեց ներկաների մէկ ընկալ յոտնկայս լուծիւնը՝ Հայոց Ցեղասպանութեան Բիւրաւոր Սուրբ Նահատակների եւ հայրենիքի պաշտպանութեան ճանապարհին իրենց թանկագին կեանքը զոհաբերած հերոսների անմոռաց յիշատակին:



Այնուհետեւ իր սրտի խօսքն արտայայտեց Թուրքիայից ժամանած Պոլսի «Ակօս» հայկական թերթի հետ աշխատակցող, լուսանկարիչ Էռհան Առիքն, ով ոգեկոչման ծրագրերի շրջագծում կայանալիք լուսանկարների ցուցահանդէսի իրագործման համար գտնուում էր Նոր Զուղայում: Նա նշելով, որ երկար տարիներ է, ինչ լուսնկարում է Հայոց Ցեղասպանութեան թեմայի շրջագծում, պատմեց ցեղասպանութեան տարիներին Մալաթիայում ապրող Ռեզայի եւ իր հայ ընկերների մասին, ովքեր դէպքից 40 տարի անց վերագտնելով միմեանց նամակագրութիւններ են ունենում իրար հետ, ուր եւ ազգութեամբ թուրք Ռեզան իր ցաւի ու ամոթի զգացումն է արտայայտում կատարածի նկատմամբ:

Ծրագրի շարունակութեան մէջ Թեմական խորհրդի անդամուհի Սոնիկ Բաղումեանն ընթերցեց ազգային իշխանութեան խօսքը, որտեղ դատապարտելով տարածաշրջանն ապակայունացնող ցեղասպան Թուրքիայի վերջին տարիների գործողութիւնները եւ յատկապէս նրա կողմից ծայրայեղական ու անաբեկչական խմբաւորումների հովանաւորումը՝ կարեւորութեամբ ընդգծել էր Թուրքիայի կառավարութեան դատապարտման եւ հայոց բռնագրաւած հողերի վերադարձման պահանջները:

Ահա մի հատուածի մէջբերում վերոնշեալ խօսքից. «Ազգային այս նոր գիտակցութեան, այս նոր որակի արդիւնքն է այն բացառիկ միասնականութիւնը եւ պատրաստակամութիւնը, որ դրսեւորում ենք ամէն օր՝ Հայաստանում ու Արցախում՝ ազգի ինքնիշխանութիւնն ու անվտանգութիւնը պաշտպանելու Ադրբեջանա-թրքական յարձակողական ու լկտի գործողութիւնների դէմ՝ հենւելով միմիայն մեր ժողովրդի ներքին ուժին, մեր զաւակների անսահման քաջութեան, ինքնազոհաբերումի աննկարագրելի կարողութեան, գիտութեան ու տեխնոլոգիայի մեր միջոցների վրայ: Միեւնոյն

համոզումի ու վարքագծի մի այլ դրսևորմամբ, հանդէս ենք գալիս սփիւրքում, իբրև ամուր պաշտպանական վահան, սիրեցեալ հայրենիքին ու արդարութեան կանչ ու կոչ՝ միջազգային հանրութեանը»:



Ծրագրում Ռուբէն Խաչիկ-Գրիգորեանն ընթերցեց Հայոց Ցեղասպանութեան 102-ամեակի առթիւ հաստատուած պարսկերէն բանաձեւը եւ իրականացուցին գեղարուեստական կատարումներ.

«Տուն իմ հայրենի» երգը մենակատարեց Վանէ Օրոջեանը, «Հերոսներին եւ մայրերին» երգով ելոյթ ունեցաւ գերայ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գունանեանը, «Անի»-ն մեներգեց Արսիկէ Ալեքսանդրեանը, իսկ «Ռեքլիմ»-ն ասմունքեց Ալինա Տէր-Սուրբասեանը:

Սուրբ Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Արմէն Ամիրխանեանի նույնպէս հանդէս եկաւ «Գարունա, ձունա արել» եւ «Դիւ-եաման» կատարումներով: Երգչախումբին «Դիւ-եաման» ասմունքով ընկերակցեց Թանիա Մինասեանը:

Համահաւաքի եզրափակիչ ելոյթը հանդիսացաւ Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէնեանի հայրական օրհնանքը: Նա իր խօսքի սկզբնական բաժնում շնորհակալութիւն յայտնելով Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչած եւ դատապարտած երկիրներին, ինչու չէ նաեւ Իրանի Իսլ.

Հանրապետութեան կառավարութեանը՝ թեմիս ոգեկոչման միջոցառումներն ու քայլարշան արտօնելու համար՝ ընդգծեց ծրագրում հնչած «Անի» երգի «Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ» բառերը, վստահութիւն յայտնելով, որ հայ ժողովուրդը ոչ միայն ազատ է տեսնելու Անին, այլեւ ամբողջ Արեւմտահայաստանը: Հայր Սուրբը յորդորեց՝ նույն ոգով շարունակել հայկական պահանջատիրական պայքարը, մինչեւ Հայ Դատի արդարացի լուծումը եւ հայ ժողովրդի բռնագրաւած իրաւունքների վերականգնումը:



Սույն պատգամից յետոյ ժողովուրդը ծաղիկներ մատուցեց յուշարձանին եւ մոմեր վառեց՝ Սուրբ Նահատակների յիշատակը ոգեկոչելու համար:

Հարկ է նշել, որ Հ.Յ.Դ. «Թաղէոս Թաղէոսեան» պատանեկան միութեան միջոցով ապրիլի 23 եւ 24-ին, վանքի շրջափակում կազմակերպել էր բողոքի նստացոյց, որին մասնակցել էին Նոր Զուղայի եւ Ծափինշահի պատանի-երիտասարդները: Համահաւաքին զուգահեռ յուշարձանի շուրջ, անմար ջահերով, հսկումի արարողութիւն կատարեցին Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Սկաուտական միաւորի անդամները, իսկ տեղի ունեցաւ արեան տուփութիւն:



**ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԵՒ ՇԱԽԻՆՇԱՀՐԻ ԴԱՀԱՆՋԱՏԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԽՈՒՌՆԵՐԱՍ
ՇԱՐՔԵՐՈՎ ՄԱՍՆԱԿՅԵՑ ԲՈՂՈՔԻ ՔԱՅԼԱՐՇԱԽԻՆ**



Երկուշաբթի՝ Ապրիլի 24-ի առաւօտեան ժամը 9:30-ից, Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցում սկիզբ առաւ ս. եւ անմահ պատարագ՝ ձեռամբ թեմիս Կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէշէճեանի եւ մասնակցութեամբ հոգեւորականաց ու դպրաց դասերի: Պատարագի ընթացքում երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս.Ա. վանքի «Կոմիտաս» երգչախումբը:



Այնուհետեւ տեղի ունեցաւ ծաղիկների մատուցման արարողութիւնը, որտեղ Հայոց Յեղասպանութեան սուրբ ճահատակների անմոռաց յիշատակին իրենց

յարգանքի տուրքը մատուցեցին՝ թեմիս հոգեւորականաց դասը՝ Կաթողիկոսական փոխանորդի գլխաւորութեամբ, շրջանի Հայ Դատի յանձնախումբը, Նոր Զուղայի եւ Շախինշահրի հայ համայնքների ազգային մարմինները, միութիւններն ու հայոց ազգային դպրոցների պատասխանատուները եւ Հայոց Յեղասպանութեան 102-ամեակի ոգեկոչման յանձնախումբը:

Հարկ է նշել, որ հոգեւորականաց դասը յուշարձանին ծաղիկներ մատուցելուց յետոյ՝ ի նշան խաղաղութեան աղանձներ թոցրեց երկինք:



Յաջորդիւ բազմահազար պահանջատէր ժողովրդի բուն վանկարկումների ներքոյ, կէսօրին՝ ժամը 12:00-ին, Ս.Ա. վանքից սկիզբ առաւ բողոքի քայլարշաւը: Աւելի քան երկու ժամ տևողութեամբ քայլարշաւն ընթացաւ Հաքիմ Նեզամի, Բոլար Մելլաթ, Թոհիդ եւ Արեւելեան Նազար գլխաւոր պողոտաներով:

Երկուշաբթի առաւօտեան Ս.Ա. վանքում իրականացած համահաւաքը հաղորդավարեց Թովմա Գալստանեանը:

Նշելի է, որ վերոնշեալ բոլոր միջոցառումներին իր խումբերամ շարքերով մասնակցութիւն ցուցաբերեցին Նոր Զուղայի եւ Շախինշահրի պահանջատէր հայորդիները:

**ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑԻՏԵՑ՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍԴԱՆՈՒԹԵԱՆ 102-ԱՄԵԱԿԻՆ
ՆԻՒՐԻԱԾ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ-ԳԵՂԱՐԻԵՍԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ**



Երկուշաբթի՝ ապրիլի 24-ի երեկոյեան, Նոր Զուղայի եւ Շախինշահրի պահանջատէր ժողովուրդն այս անգամ համախմբուեց Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան

թեան սրահում՝ մասնակցելու Հայոց Յեղասպանութեան 102-ամեակին նկիրած դասախօսական-գեղարվեստական միջոցառմանը:



Երեկոյին ներկայ էին՝ թեմիս կաթողիկոսական փո-

խանորդ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէնեանը, Ծահին-
շահրի հայ համայնքի հոգևոր տեսուչ գերայ. Տ. Անա-
նիա ծ. վրդ. Գունանեանը, քահանայից դասը, Հայաս-
տանից հրաւիրած բանասիրական գիտութիւնների
դոկտոր եւ Մանուկ Աբեղեանի անան գրականութեան
ինստիտուտի տնօրէն Վարդան Դերիկեանը, ազգային
մարմինների ու շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներ-
կայացուցիչներ եւ հոծ ժողովուրդ:



Ծրագիրը բացւած յայտարարեց Մանիա Ղուկա-
սեանի հաղորդավարութեամբ, ապա դասախօսու-
թեամբ ելոյթ ունեցաւ Վարդան Դերիկեանը, ով իր
խօսքի սկզբնական բաժնում անդրադառնալով իրա-
նահայ համայնքի պատմութեանը, նշեց՝ թէ եւ սոյն հա-
մայնքը Հայոց Յեղասպանութեան հետեւանքով առա-
ջացած գաղութներից չի եղել, սակայն կենդանիօրէն
կապել եւ յարաբերել է Հայոց Յեղասպանութեան
հետ:

Պրն. Դերիկեանն իր խօսքի մի այլ բաժնում ընդգր-
ծելով, որ Հայոց Յեղասպանութիւնը նազագոյնը շա-
րունակել է սպիտակ ջարդի եւ մշակութային ցեղաս-
պանութեան ուղղութիւններով, որպէս մշակութային
ցեղասպանութիւնից նմուշներ, թարկեց՝ հայութեան
գոյութեան մասին վկայող՝ կոթողների, ձեռագիր
մատենաների ու տեղանունների ոչնչացումը՝ շեշտելով,
որ սոյն ցեղասպանութիւնը նոր երեսոյթ չէ եւ այն սկսել
է Հայոց Յեղասպանութիւնից առաջ:



Բանախօսը մատնանշելով, որ հայ ժողովրդին ան-
դեկավար թողնելու նպատակով՝ թուրքը ամենասկզբ-
քում սպանդի ենթարկեց հայ մտաւորականութեանն ու
հոգեւորականութեանը, աւելացրեց, որ այսօր հենց այս
հանգամանքը մեզ աւելի է պարտաւորեցնում, որպէսզի

համախմբելով մեր ազգային ու եկեղեցական կառոյց-
ների շուրջ, լծենք Հայ Դատի աշխատանքներին:

Նա վերջում մէջբերելով երջանկայիշատակ Գարե-
գին առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի «Ժողո-
վուրդն է մեր պատմութեան մեծագոյն ոսկին» խօսքը,
կարեւորութեամբ ընդգծեց, որ չպէտք է նոսրանայ հայ-
րենիքի մեծագոյն հարստութիւնը՝ ժողովուրդը, քանի որ
Հայաստանի Հանրապետութեան հզօրացումը Հայ
Դատի կարեւորագոյն գործօններից է:



Գեղարեստական ծրագիրը յագեցած էր երգերով,
ասումներով ու պարային կատարումներով: Ընթաց-
քում Ս. Ամենափրկիչ վանքի «Տաթեւ» երգչախմբի մե-
ներգիչներ՝ Արսիկէ Ալեքսանդրեանը, Փարելի Թահ-
մագեանն ու Լալա Ալեքսանդրեանը կատարեցին
«Սուրբերի աչքեր»-ը, դոկտ. Արքի Բաբումեանի դաշ-
նամուրի նազակցութեամբ «Կիլիկիա»-ն մեներգեց
Վանանդ Իսաղուկեանը, «Անի» եւ «Դիւ էաման» պա-
րային կատարումներով ելոյթ ունեցաւ Ն.Ջ. Հայ Մ.Մ.
«Արարատ» միութեան «Կոունկ» համոյթի պարախում-
բը, իսկ նոյն համոյթի ասմունքի խմբից՝ «Ռեքլիմ»-ը
կատարեց Լեւոնիկ Ծատուրեանը եւ «Ծառաշող շղթա-
ներ»-ը՝ Կարէն Խանլարեանը: Ծրագրի ընթացքում
«Ապրելու ապրիլ»-ը զուգերգեցին Ս. Ամենափրկիչ
վանքի «Կոմիտաս» երիտասարդական երգչախմբի մե-
նակատարներ՝ Թանիա Մինասեանն ու Վանա Ծիրա-
նեանը, իսկ «Արժանի» երգը զուգերգեցին գերայ. Տ.
Անանիա ծ. վրդ. Գունանեանը եւ Վանանդ Իսաղու-
կեանը:





Երեկոյի գեղարուեստական խմբերի ելույթների իրականացման ուղղությամբ յանձնախմբի հետ համագործակցել էին՝ Ս. Ամենափրկիչ վանքի «Տաթև» երգչախմբի խմբավար Համիկ Ալեքսանդրեանը, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ»

միութեան «Կոունկ» համոյթի պարուսույց Նունէ Մկրտչեանը, նոյն համոյթի ասմունքի խմբի ղեկավար Ռիմա Սիմոնեանը եւ Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախմբի խմբավար Արմէն Ամիրխանեանը:

Ծրագիրն իր աւարտին հասաւ կաթողիկոսական փոխանորդ Հայր Սուրբի պատգամով: Սկզբում նա դրատանքով արտայայտեց անցնող օրերի ընթացքում իրականացած ոգեկոչման միջոցառումների եւ

ժողովրդի խուռներամ մասնակցութեան կապակցութեամբ, ապա նշելով, որ այսօր՝ Ապրիլ 24-ը ոգեկոչելուն զուգահեռ, ոգեկոչում ենք նաեւ Պոլսի «Ակօս» թերթի խմբագիր Հրանդ Դինքի սպանութեան 10-ամեակը, աւելացրեց. «Թուրք ցեղասպանի ժառանգորդները՝ նոյն ոճրագործներն են, ովքեր կարծում էին Հրանտին սպանելով կարող են լոյսնել ու չէզոքացնել հայ ժողովրդին: Հրանդը որպէս մի հատիկ ընկաւ, սակայն նրա փոխարէն մի ոսկեայ հունձ բուսնեց աշխարհում եւ յատկապէս մեր ժողովրդի մէջ, որի մեծագոյն ապացոյցներից է Թուրքիայի խորհրդանուն հայ ազգի պատգամաւոր Կարօ Փայլանը»: Գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէշէճեանը կոչ արեց՝ միասնաբար ուխտել՝ որպէս ոսկեայ հունձ փոխարինել մեր ազգի ընկած պողպատեայ գործիչներին, որպէսզի Հայ Դատի յաղթական աւարտը մեզ համար լինի ոչ թէ հեռանկար այլ յստակ պատկեր:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՅՈՒՄ ԵՒ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՅՈՒՅՆՈՒԹԵԱՄԻ ԲԱՅՈՒՄ՝ ԴԱՐՍԻԿ ՀԱՅՐԵՆԱԿԻՅՆԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԻ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ



Շրջանի Հայ Դատի յանձնախմբի նախաձեռնութեամբ, չորեքշաբթի՝ ապրիլի 26-ի երեկոյեան ժամը 7:00-ին, Ս. Ամենափրկչեան վանքում, պարսիկ հայրենակիցների ներկայութեամբ, մշակութային միջոցառում իրականացւեց՝ ներկայացնելով Հայոց Ցեղասպանութեան 102-ամեակին: Ծրագիրն հրաւիրել եւ ներկայ էին՝ Սպահան քաղաքի 5-րդ շրջանի քաղաքապետ ճրտ. Ֆառհանգը, պետական բարձրաստիճան պաշտօնատարներ, համալսարանների դասախօսներ, ուսանողներ, արեստագէտ անհատներ եւ այլ հիւրեր:



Սկզբում ներկաները Բիւրաւոր Սուրբ Նահատակների յիշատակին՝ ծաղիկներ մատուցեցին յուշարձանին, ապա երեկոյի հաղորդավար Ռուբէն Խաչիկ-Գրիորեանն անդրադարձ կատարելով Հայոց Ցեղասպանութեան իրողութեանն ու տարածաշրջանի ապակայունացման ուղղությամբ Թուրքիայի վերջին տարիների գործողութիւններին՝ խաղաղութիւն հաստատելու համար կոչ արեց համայն աշխարհին ճանաչել ու դատապարտել Հայոց Ցեղասպանութիւնը եւ ցեղասպանից հատուցում պահանջել:



Ծրագրի երկրորդ բաժնում Պոլսի հայերէն «Ակօս» թերթի հետ աշխատակցած, լուսանկարիչ Էռիան Առիքի «Արմատների ցաւը, արմատների կանչը» խորագրով լուսանկարների ցուցահանդէսի մտայղացման եւ բովանդակութեան մասին բացատրութիւններով հանդէս եկան իրանահայ դասախօս-լրագրող եւ Թուրքիայի հարցերի մասնագէտ Գրիգոր Ղազարեանն ու նոյն ինքը հեղինակը:
Պրն. Ղազարեանը նշելով, որ սոյն ցուցահանդէսի

լուսանկարները կատարել են 2014-2016 թվականներին՝ Հայաստանում եւ Սիրիայի, Պաղեստինի, Լիբանանի, Իրանի, Իրաքի եւ Յորդանանի հայ համայնքներում, ատելացրեց, որ Էռհան Առիքի լուսանկարներում ոչ միայն կարող ենք դիտել անցեալի ցաւոտ հետքը՝ ցեղասպանութիւնից յետոյ ծնած սերունդների կեանքում, այլեւ գտնել այս ուղղութեամբ բազմաթիւ հարցերի պատասխանները: Նա յոյս յայտնեց, որ անցեալից դասեր քաղելով եւ պատմութեան հետ առերեսելով՝ խաղաղութիւն է հաստատուելու աշխարհում եւ ապագան կերտուելու է առանց ատելութեան ու խտրականութեան:



Այնուհետեւ ազգութեամբ թուրք լուսանկարիչ պրն. Առիքը, ով ծնել է Թուրքիայի Արդահան նահանգի նախկինում հայաբնակ մի գիւղում, բացատրեց, թէ այն տունը, որտեղ ինքը ծնել ու մեծացել է, մինչեւ ցեղասպանութիւնը պատկանել է մի հայ ընտանիքի եւ ինքն այդ մասին իմացել է միայն 2010 թվականին՝ իր երազներից մէկում լսած ձայնի միջոցով, որից էլ խորապէս յուզել է: Նա իր խօսքի շարունակութեան մէջ ատելացրեց, ինչ որ իմաստով ինքը արդիւնքն է այն մեծ ու որակական ազդեցութեան, որը Հրանդ Դինքի սպանութիւնն է առաջացել Թուրքիայի հասարակութեան ատելի առողջ խաւերում եւ ընդգծեց՝ որոշել է իր մասնագիտութեամբ ու արւեստով՝ հայ ժողովրդի մեծ վշտի ցասկիցը դառնալ ու առերեսելով սեփական պատմու-

թեան հետ, առանց ցեղասպանի խարանը կրելով առաջ գնալ:



Էռհան Առիքը ներկաների համար պատմելով նաեւ իր լուսանկարների հերոսներից մի քանիսի յոյզերի ու զգացումների մասին՝ յատկապէս մատնանշեց ցեղասպանութիւնից վերապրածների կեանքում առկա խորը ցաւը եւ յետագայ սերունդների հոգում տեղ գտած արմատների կանչը:



Երեկոյի աւարտին «Արմատների ցաւը, արմատների կանչը» խորագրով ցուցահանդէսի պաշտօնական բացումը կատարեց թեմիս կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչեճեանի եւ շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ Վահէ Թորոսեանի միջոցով՝ ներկաներին առիթ ընձեռելով դիտելու խորիմաստ հաւաքածուն:

ՀԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՊԱՆԱԴՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ 62-ՐԴ ՀԱՇԻՏՈՒ ՆԻՍԻՒ

Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի 62-րդ հաշտնուու նիստը գումարւեց թիւականիս մարտի 9, 10 եւ 11-ին, Ս. Ամենափրկչեան վանքի Ծաղկեայ դահլիճում, որով իր աւարտին հասաւ 15-րդ Պատգամաւորական ժողովի գործունէութեան քառամեայ ժամանակաշրջանը:



Նիստը տեղի ունեցաւ թեմիս Կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչեճեանի նախագահութեամբ եւ մասնակցութեամբ՝ Իսլ. խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան

պատգամաւոր Ժորժիկ Աբրահամեանի, շրջանների պատգամաւորների, հոգեւոր դասի ներկայացուցիչների, Թեմական ու Կրօնական խորհուրդների, Հաշտեքընիչ մարմնի, ենթամարմինների ներկայացուցիչների եւ ժողովի կողմից հրաւիրեալ ազգայինների:



Նիստի բացումը կատարեց Հայր Սուրբի միջոցով՝

իմաստութեան եւ գործի յաջողութեան աղօթքներով, ինչու չէ նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի եւ իր օրհնութեան խօսքերի փոխանցմամբ:

Այնուհետեւ անցնելով ժողովի օրակարգին՝ շրջանաւարտ մարմինների միամեայ գործունէութեան շուրջ հարցումներ ուղղւեցին Պատգամաւորական ժողովի դիւանին, Թեմական ու Կրօնական խորհուրդներին եւ Հաշիւեքննիչ մարմնին, ապա հնչեցին ըստ էութեան արտայայտութիւններ, որոնց արդիւնքում բարձր գնահատւեց գործադիր մարմինների գործունէութիւնը:

Ընթացքում իր 10-ամեայ գործունէութեան վերաբերեալ զեկույցով հանդէս եկաւ խորհրդարանի պատգամաւոր Ժորժիկ Աբրահամեանը, որից յետոյ նա պատասխանեց ներկաներին յուզող հարցերին:

Յաջորդիւ ժողովականների կողմից հնչեցին մի շարք առաջարկներ ու մտահոգութիւններ, որոնք նույնութեամբ փոխանցելու են յաջորդ Պատգամաւորական ժողովի Դիւանին՝ առ ի ուսումնասիրութիւն եւ պատշաճ տնօրինութիւն:

Նիստն աւարտւեց Կաթողիկոսական փոխանորդ Հայր Սուրբի «Պահպանիչ» աղօթքով:

ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ

Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի նախաձեռնութեամբ, երեքշաբթի՝ մարտի 14-ի երեկոյեան, խորհրդի ժողովարարում կազմակերպւեց գնահատման երեկոյ, որտեղ մեծարւեցին ՀՀ անկախութեան 25-ամեակի, Ս. Ա. Վանքի «Ս. Ներսէս Ծնորհալի» գրադարանի հիմնադրման 110-ամեակի, Սպահանի հայոց թեմի 16-րդ շրջանի Պատգ. ժողովի ընտրական եւ Ս. Ա. Վանքի ամանորի յանձնախմբերի անդամները:

տանքները: Վրէժ Տէր-Մարտիրոսեանն իր խօսքի աւարտին ներկաներին յորդորեց նոյն համագործակցութեան ոգով շարունակել իրենց ազգանպաստ աշխատանքը:



Ծրագրին ներկայ էին Թեմիս Կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տէր Սիփան ծ. Վրդ. Քէչէճեանը եւ Թեմական խորհրդի անդամները:

Շարունակութեան մէջ խօսքը փոխանցւեց Թեմիս Կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տէր Սիփան ծ. վրդ. Քէչէճեանին, ով եւս հանդէս եկաւ շնորհակալանքի ու բաջալերանքի խօսքերով:

Միջոցառումը սկզբի առաւ միասնական աղօթքով, ապա Թեմական խորհրդի անունից արտայայտւեց կազմի ատենապետ Վրէժ Տէր-Մարտիրոսեանը, ով շնորհակալական խօսք ուղղեց յանձնախմբերի անդամներին, որոնց ջերմեռանդ գործունէութեան եւ անսակարկ համագործակցութեան շնորհիւ բարեյաջող աւարտ են ունեցել նրանց վստահաձ բոլոր ծրագրերը, նշելով որ ազգային մարմինները առանց նման անհատների, կը դժարանային իրականացնել այդ աշխատանքները:

Յանուն հրաւիրեալ յանձնախմբերի, արտայայտւեց Զարեհ Ղարախանեանը՝ շնորհակալութիւն յայտնելով Թեմական խորհրդին՝ իրենց վստահաձ պարտականութեան համար, այնուհետեւ ներկաները յուշեր պատմեցին աշխատանքի ընթացքից:

Վերջում տեղի ունեցաւ գնահատագրերի բաշխման արարողութիւն, ուր Թեմական խորհրդի կողմից պատրաստաձ գնահատագրերը գերայ. Հայր Սուրբի եւ խորհրդի ատենապետի ձեռամբ յանձնուեցին պատկան կազմերի անդամներին:

Միջոցառումն աւարտուեց հիւրասիրութեամբ:

«ՆՈՐ ԶՈՒՂԱ ԵՒ ՆՈՐԶՈՒՂԱՅԵՑԻՆԵՐ» ԹԵՄԱՅՈՎ ԲԱՆԱԽՕՍԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ

Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի նախաձեռնութեամբ չորեքշաբթի՝ մարտի 15-ի երեկոյեան, Նոր Զուղայի հայոց ազգ. կրթահամալիրի «Ալեմուշ Տէրեան» դահլիճում, կազմակերպւել էր «Նոր Զուղա

եւ նորջուղայեցիներ» խորագրով բանախօսական երեկոյ, ուր ելոյթով հանդէս եկաւ նոյն խորհրդի հրաւերով Հայաստանից ժամանաձ տնտեսական մշակութաբան, հրապարակախօս եւ պատմաբան Խաչատուր Դադայեանը:

Երեկոյին ներկայ էին՝ թեմիս Կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, ազգային մարմինների, հոգեւորականաց դասի եւ շրջանի Հայ Դատի յանձնախմբի, հայոց ազգ. դպրոցների ու միութիւնների ներկայացուցիչներ, մի շարք այլ հրաւիրեալներ եւ ժողովուրդ:



Սկզբում բացման խօսքով եւ թեմայի մասին մի շարք բացատրութիւններով հանդէս եկաւ հաղորդավարուհի Սօսէ Պօղոսեանը, որից յետոյ իր ելոյթը ծաւալեց բանախօս Խաչատուր Դադայեանը:

Նա ազգային նպատակներին ծառայեցող դրամագլուխը, ազգային կապիտալ անւանելով, նշեց, որ ժամանակին եղել են ազգային կապիտալի չորս օջախներ՝ Նոր Զուղայի, արեւմտահայութեան, արեւելահայութեան ու եւրոպահայոց ազգային կապիտալները, որոնց բոլորի մէջ էլ էական դեր են ունեցել նորջուղայեցի վաճառականները:



Բանախօսն իր խօսքում յիշեց յատկապէս երկու անգամ հովապետական այցով Հնդկաստան մեկնած Թորգոմ արք. Գուշակեանին, ով հանդիպելով տեղի նորջուղայեցիներին ասել էր, թէ ջուղայեցին՝ հայութեան ամենաազնիւ եւ ուշիմ տիպարը, մեր ժողովրդի այն տարրն է, ով ամենաճիշտ ու գեղեցիկ կերպով է պարզում իր ցեղային նկարագրի բարի կողմերը եւ զարմանալի արագութեամբ է օգտագործում իրեն ընձեռած նպաստաւոր պայմանները՝ իր ազգային բարեմասնութիւնները զարգացնելու համար:

Պրն. Դադայեանն իր ելոյթի շարունակութեան մէջ, հիմնականում հետաքրքիր դրագների անդրադարձ ունենալով՝ մատնանշեց նորջուղայեցիների կենցաղային առանձնայատկութիւնները, սովորութիւնները եւ վաճառականութեան ոլորտում նրանց ունեցած հմտութիւններն ու օրէնքները, յատկապէս շեշտելով, որ այս շրջանի վաճառականները, առետուր անելիս փոխանակում էին նաեւ քաղաքակրթական արժէքները եւ հային բնորոշ էութիւնը, ազնութիւնն ու պարկեշտութիւնը:

Վերջում բանախօսը պատասխանեց հնչած հարցերին:

ՆՈՒՈՒԶ-Ի ԱՌԹԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ԱՅՅԸ ՍՊԱՀԱՆԻ ԳԱԻԱՌԱՊԵՏԱՐԱՆ

Երկուշաբթի՝ 2017 թականի մարտի 27-ին, Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քեչէջեանը, ընկերակցութեամբ Իրանի իսլամական խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր պրն. Փորժիկ Աբրահամեանի, Կրօնական խորհրդի ատենապետ պրն. Վարուժ Մովսիսեանի, Թեմական խորհրդի անդամ դկտ. Նորայր Թումանեանի եւ շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ Վահէ Թորոսեանի, այցելեց Սպահանի նորանշանակ գաւառապետ Ահմադ Ռեզանիին: Հանդիպմանը ներկայ էին գաւառապետարանի մի շարք բարձրաստիճան պատասխանատուներ:


Երկուստեք շնորհաւորանքներ փոխանցեց իրանական ամանորի՝ Նոռուզ-ի առթիւ եւ բարեմաղթանքներ հնչեցին:

Գերայ. Հայր Սուրբը միաժամանակ գաւառապետին շնորհաւորեց իր նոր պաշտօնի ստանձնման համար եւ յաջողութիւն ու առողջութիւն մաղթեց նրան՝ իր գործունէութեան այս դաշտում:

Պրն. Ռեզանիին յոյս յայտնեց, որ պետական շրջանակում զանազան պաշտօններ վարած իր եռեսնամեայ աշխատանքի փորձառութիւնը նպաստելու է Սպահանի բարգաւաճմանն ու հանրութեանը, միաժամանակ հայ համայնքին՝ նրանց օգտակար ծառայութիւններ մատուցելով:



ՀՈՒՆԳԱՐԱՅԻ ՊԱՏԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆԵՐՈՒՄ



Երեքշաբթի՝ 2017 թվականի ապրիլի 4-ի միջօրէին, Հունգարիայի վարչապետի տեղակալ Ժոլթ Ծամինը, իրեն ընկերակից ունենալով Հունգարիայի Ազգային ժողովի փոխ-ատենապետ Եանոշ Լաթորսայիին, Հունգարիայի քաղաքական ու տնտեսական մի

հայատեաց կեցածքն ու անարդար քաղաքականութիւնը, առիթն օգտագործելով դիմեց յարգելի հիւրերին՝ իրենց հնարաւորութիւններն ի գործ դնելու՝ Հունգարիայում Հայոց ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ:



քանի բարձրաստիճան պատասխանատուների, Իրանում Հունգարիայի արտակարգ եւ լիազօր դեսպան Եանոշ Քովաչին, այցելեց Ս. Ամենափրկչեան վանք, այցելեց «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի եւ «Խաչատուր Կեսարացի» թանգարան, ապա Ազգային առաջնորդարանի Ծաղկեայ դահլիճում տեսակցութիւն ունեցաւ Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի, Պատգամաւորական ժողովի, Թեմական ու Կրօնական խորհուրդների եւ Հայ Դատի յանձնախմբի Նոր Զուղայի գրասենեակի ներկայացուցիչների հետ:

Հանդիպման ընթացքում, Պրն. Ծամինը, նախ շնորհակալութիւն յայտնեց պատմիրակութեանն ընդունելու եւ ջերմ հիւրընկալութեան համար, ապա բացատրելով Հունգարիայում հայ համայնքի ներկայութեան շուրջ չորս դարեայ վաղեմութեան մասին, նշեց, թէ գիտական, կրթական, արհեստի եւ արւեստի զանազան բնագաւառներում Հունգարիայի հայերը նշանաւոր գործիչներ են ունեցել, որոնք նպաստել են սոյն երկրի վերելքին եւ իբրեւ հզօր համայնք ջերմ յարաբերութիւն են մշակել պետութեան հետ: Իր արտայայտութիւնների շարունակութեան մէջ Պրն. Ծամինը ցաւով անդրադարձաւ 2012 թվականին կատարւած դէպքին եւ անձամբ իր դժգոհանքը յայտնեց Ադրբեջանի որդեգրած քայլի վերաբերեալ եւ շեշտեց, որ այդ կապակցութեամբ Ադրբեջանը կատարել է Հունգարիայի պետութեան եւ դատական մարմիններին պաշտօնապէս տւած իր գրաւոր խոստման հակառակը, որի արդիւնքում խոր անջատում է տեղի ունեցել Հունգարիոյ պետութեան եւ հայ համայնքի միջեւ, ինչը ցանկալի երեւոյթ չէ:

Հայր Սուրբն ուրախութեամբ ողջունեց հիւրերի ներկայութիւնը, եւ համապարփակ կերպով բացատրեց Իրանում ապրող հայութեան, Սպահանի հայոց թեմի կացութեան եւ պետական մակարդակի յարաբերութիւնների մասին, միաժամանակ ընդգծելով քաղաքի, նահանգի եւ երկրի բոլոր պատասխանատուների բարի վերաբերմունքը՝ հայութեան նկատմամբ:

Պրն. Ծամինը դիմելով Ազգային իշխանութեանը՝ Հունգարիայի պետութեան եւ հունգարահայ համայնքի միջեւ յարաբերութիւնը վերականգնելու գործում անհրաժեշտ համարեց նրա աջակցութիւնը: Նա բացատրեց, որ իր ներկայացրած դեմոկրատական կուսակցութիւնն ու իրեն ընկերակցող անձինք կողմ են Հայոց Ցեղասպանութեան ճանաչմանը եւ այդ ուղղութեամբ հետեւողական աշխատանք են իրականացնում:

Գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը յուշելով 2012 թվականին Հունգարիայում կազմակերպւած ռազմաուսուցողական ծրագրի ընթացքում ադրբեջանցի Սաֆարովի միջոցով հայ սպայի կացնահարման եւ սպանման պարագան, իր զարմանքն ու վրդովմունքը յայտնեց Հունգարիոյ կառավարութիւնից՝ ոճրագործին Ադրբեջանին յանձնելու համար, որի արդիւնքում նա ոչ միայն իրեն արժանի պատիժը չկրեց, այլ Ադրբեջանի կառավարութեան կողմից ճանաչեց իբրեւ «ազգային հերոս»: Գերայ. Հայր Սուրբը մատնանշելով այս դէպքը եւ շեշտելով, որ դա ապացուցում եւ պարզում է թուրքի

ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ՆՈՌՈՒՋԻ ԱՌԹԻ

ա) Երկուշաբթի՝ 2017 թվականի ապրիլի 10-ի առաւօտեան եւ միջօրէին, Ազգային առաջնորդարանի պատմիրակութիւնը, իրանական Նոռուզի առթիւ շնորհաւորանքներ փոխանցելու նպատակով, հերթաբար այցելեց Սպահանի 5-րդ շրջանի քաղաքապետ պրն. Ֆառհանգին եւ Իսլամական մշակոյթի եւ առաջնորդութեան Սպահանի գերատեսուչ հոջ. Առզանիին:

Կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը գլխաւորում էր Առաջնորդարանի պատմիրակութեանը, որին մաս էին կազմում Պատգամաւորական ժողովի դիւանի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետեր պրնք. Թաթոյլ Օհանեանը, Վարուժ Մինասեանը, Վարուժ Մովսիսեանը եւ Պատգամաւորական ժողովի փոխ-ատենապետ պրն.

Մկրտիչ Աւետումեանը:



Հանդիպումների ընթացքում երկուստեք բարեմալ-թութիւններ փոխանցելուց բացի, գերպ. Հայր Սուրբը առիթը պատեն համարեց շնորհակալութիւն յայտնելու պատասխանատուներին՝ Առաջնորդարանի եւ հայ համայնքի նկատմամբ ունեցած յատուկ ուշադրութեան եւ ցուցաբերած համագործակցութեան համար:



Միաժամանակ պատիրակութիւնը պրն. Ֆառհանգին եւ հոջ. Առզանիին հրաւիրեց մասնակցելու Ս. Ամենափրկչեան վանքում տեղի ունենալիք ապրիլեան ձեռնարկներին, որոնց ընթացքում նաեւ դատապարտւելու

է Ամերիկայի կողմից Սիրիայի վրայ կատարած հրթիռային յարձակումը:

բ) Չորեքշաբթի՝ 2017 թականի ապրիլի 12-ի առաւօտեան ճոյն պատիրակութիւնը, որի կազմում էր նաեւ Նոր Զուղայի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ պրն. Վահէ Թորոսեանը, այցելեց Սպահանի գլխաւոր քաղաքապետ դկտ. Զամալինեժադին: Հանդիպմանը ներկայ էր նաեւ 5-րդ շրջանի քաղաքապետ պրն. Ֆառհանգը:



Նոր տարւայ շնորհաւորանքներ փոխանակելուց յետոյ, պրն. քաղաքապետը տեղեկացնելով, որ քաղաքապետարանը յատուկ կարեւորութիւն է տալիս երկուստեք համագործակցութեան ծաւալի ու որակի բարձրացմանը, հրաւիրեց հայ համայնքին իր բոլոր հնարաւորութիւններով մասնակցելու մայիս ամսւայ ընթացքում մեկնարկող Սպահանի շաբաթընէ մէկշաբաթեայ ծրագրին, որտեղ միջազգային մակարդակի վրայ ներկայացելու է Սպահանի մշակութային, հոգեւոր, զբօսաշրջիկական, մարզական եւ այլ բնագաւառներում ունեցած ուժականութիւնը:

Պրն. Զամալինեժադը նոյնպէս հրաւիրեց մասնակցելու ապրիլեան ձեռնարկներին:

«ՍՊԱՀԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՆ ՇԱՐՔԹ»-ԻԱՅ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԻԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔՈՒՄ



Սպահանի քաղաքապետարանի նախաձեռնութեամբ, իւրաքանչիւր տարի՝ ապրիլի 23-ից 29-ը ընկած ժամանակահատուածում նշուում է «Սպահանի շաբաթ»-ը: Այս տարի նախատեսած բազմաթիւ ծրագրերի շարքում, քաղաքապետարանի առաջարկով իր բաժին մասնակցութիւնն ունեցաւ նաեւ Նոր Զուղայի հայ համայնքը: Այս շրջագծում, Թեմական խորհրդի միջոցով կեանքի կոչւած յանձնախումբը, ապրիլի 28-ից 30-ը, Ս.

Ամենափրկչեան վանքի տարածքում իրականացրեց հայկական տարազների, խոհանոցի եւ լուսանկարների ցուցահանդէս:



Ս. Ա. Վանքի բակի կենտրոնական բաժնում եւ զանգակատան շուրջ, կենդանի կերպով ցուցադրւեցին հայ խոջայի, հոգեւորականի, հայ ուսուցչի եւ աշակերտի,

Նոր Զուղայի, Փերիայի եւ Չհարմահալի հայ կնոջ տարազներ: Առանձնապէս ներկայացրեց Վառվառէ Քանանեանի կերպարը՝ բարերարի շիրիմի կողքին:



«Ս. Ներսէս Շնորհալի» գրդարանի մէջ ցուցադրուեց Էռնեստ Հոլցերի լուսանկարները, որտեղ ներկայացած էին յիշեալի ընտանեկան լուսանկարները եւ Նոր Զուղայի հայ համայնքին առնչուող տպատրիչ պատկերներ:



Նոր Զուղայի հայկական տարազների եւ դրանց լուսանկարների մի այլ ցուցահանդէս եւս կազմակերպել էր Ս. Ա. Վանքի ցուցասրահում:

Եռօրեայ ցուցահանդէսի ընթացքում մեծ հետաքրքրութիւն առաջացրեց յատկապէս հայկական խոհանոցին պատկանող ուտեստներն ու նրանց մատուցման ձեւը:



Շաբաթ՝ ապրիլի 29-ի միջօրէին, Ս. Ամենափրկչեան վանք ժամանեց եւ ցուցահանդէսի բոլոր բաժինների հետ ծանօթացաւ Սպահանի 5-րդ շրջանի

քաղաքապետ ճարտ. Ֆառհանգը, իսկ կիրակի կէսօրից յետոյ Սպահանի քաղաքապետ դոկտ. Զամալինե-ժաղը եւ իրեն ընկերակցող պատուիրակութիւնը այցելեցին կազմակերպած ցուցահանդէսներին եւ իրենց խորը գոհունակութիւնը յայտնեցին կատարած աշխատանքի կապակցութեամբ:



Յատկանշելի է, որ ցուցահանդէսի կազմակերպչական աշխատանքներին աջակցել են բազմաթիւ հայորդիներ եւ կազմեր: Ամբողջ օրերի ընթացքում ցուցադրող տարազները կրել են մի քանի պատանիներ, երիտասարդ-ուհիներ եւ անձինք: Զանազան անհատներ ստանձնել են տեղացի եւ օտարերկրացի այցելուներին բացատրութիւններ հաղորդելու պարտականութիւնը: Հայկական խոհանոցի ցուցադրումը իրականացել է Ն. Զ. Հայ կանանց գթութեան, Ն. Զ. Հայուհեաց բարեգործական ընկերութեան, Փերիոյ կրթասիրաց եւ Հայ Ուսում. Չհարմահալ միութիւնների համագործակցութեամբ, որտեղ տեղացի եւ օտարերկրացի այցելուներին հրամցել են հայկական զանազան կերակրատեսակներ:



Սոյն աշխատանքը ղեկավարել է տկն. Ռիմա Սիմոնեանի, օրդք. Կարին Տէր-Մարտիրոսեանի եւ Վերգինէ Միրզախանեանի անդամակցութեամբ յանձնախմբի միջոցով:

ԾԱՂԿԱԶԱՐԴ ՏՕՆԻ ԵՒ ԴՈՆԲԱՅԵՔԻ ԱՌԹԻՒ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Ցիսուս Քրիստոսի Երուսաղեմ կատարած յաղթական մուտքի յիշատակման տօնը՝ Ծաղկազարդը, հանդիսութեամբ նշեց կիրակի՝ ապրիլի 9-ի առաւօտեան, Նոր Զուղայի Ա. Ստեփանոս, Ա. Յովհաննոս, Ա. Աստուածածին եւ Ա. Մինաս եկեղեցիներում:

ղեցիներում իրականացւեց նաեւ Դոնբայցեքի արարողութիւնը:

Ա. Յովհաննոս եկեղեցու արարողութիւնը նախագահեց եւ կատարեց Սպահանի հայոց թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը. ժամերգութեանը մասնակցել էր նաեւ նոյն եկեղեցու ծխատէր քահանայ հայր արժ. Տ. Վազգէն քինյ. Քէօշկէրեանը, իսկ շարականների երգեցողութեամբ հանդէս եկաւ «Շուշանիկ» հոգետր երգչախումբը՝ ղեկավարութեամբ Անուշ Յովհաննիսեանի:

Բազմաթիւ անտարանական ընթերցումներից, շարականներից եւ փոխասացութիւններից յետոյ, գերայ. Հայր Սուրբը ս. խորան բարձրացաւ եւ փակ վարագոյրի առջեւ ծնկի եկած, բախեց երկնային արքայութեան դռները եւ բարձրեալ Աստծուց իր գթառատութիւնն ու ողորմածութիւնը հայցեց, որպէսզի նա ընդունի մեր բոլորի ապաշխարանքն ու պահեցողութիւնը եւ մեզ արժանի դարձնի իր երկնային արքայութեան մէջ օթեանելու: Վերջում բացեց Մեծ պահքի ընթացքում փակ մնացած վարագոյրը՝ որպէս խորհրդանիշ այն իրողութեան, որ ապաշխարութեամբ բացւելու են երկնքի արքայութեան դռները:



Իրաքանչիւր եկեղեցում պատկան ծխատէր քահանայ հօր ձեռամբ մատուցւեց ս. եւ անմահ Պատարագ, իսկ ընթացքում հնչեց տօնի առնչութեամբ քարոզը: Յաւարտ Ա. Պատարագի շարականի երգեցողութեամբ, եկեղեցիների շրջափակում իրականացւեց աւանդական թափօրը՝ քահանայ հայրերի գլխաւորութեամբ եւ հաւատացեալ ժողովրդի՝ ի մասնաւորի մանուկների մասնակցութեամբ: Ա. Յովհաննոս եկեղեցու Պատարագին ներկայ գտնւեցին եւ աւանդական թափօրին մասնակից դարձան Նոր Զուղայի հայոց ազգ. մանկապարտէզ-նախակրթարանի սաները եւ «Արմէն» երկսեռ կրթահամալիրի երկրորդ ու չորրորդ դասարանների աշակերտ-ուհիները՝ պատկան ուսուցիչների ու պատասխանատուների ուղեկցութեամբ:



Այնուհետեւ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանն իր հայրական պատգամը փոխանցեց ներկաներին: Նա իր խօսքում անդրադառնալով դատաստանի օրւան՝ նշեց, որ Աստծոյ ճանապարհին ընտրած իսկական հաւատացեալները մեծ ցնծութեամբ են սպասում այդ օրւան, իսկ Աստծոյ պատկիրաններին ու օրէնքներին հակառակ ընթացք բռնած անհատների համար դատաստանի օրւայ գալստեան ահազանգը սարսափելի երեւոյթ է: Հայր Սուրբը յորդորեց՝ երկրորդ խմբին չպատկանելու եւ դատաստանի օրից չսարսափելու համար՝ սրբագրել ներաշխարհը եւ փոխել ընթացքը՝ իսկական զոջումով ու ամբողջական ապաշխարութեամբ. քանի որ դա է Աստծոյ գթութիւնը, ներողամտութիւնը եւ օրհնութիւնն ստանալու բանալին:

Վերոնշեալ երկու արարողութիւններին մասնակցել էին հոծ թուով հաւատացեալ ժողովուրդ:



Յատկանշական է, որ Ա. Պատարագից առաջ, բոլոր եկեղեցիներում օրհնւեցին պատկան Տիկնանց յանձնախմբի միջոցով պատրաստուած ուռենու եւ ձիթենու ճիւղերը, որոնք արարողութեան ընթացքում բաժանւեցին ներկաներին:

Նոյն օրը երեկոյեան ժամը 5:30-ին, վերոնշեալ եկե-

**ՀՈԳԵՊԱՐԱՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ ՏԱՍԸ ԿՈՅՍԵՐԻ ԱՌԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐԸ
ՆՇԻՏՅ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ**

Տասը կոյսերի առակի յիշատակի օրւայ առթիւ, երեքշաբթի՝ ապրիլի 11-ի երեկոյեան ժամը 5:30-ին, Նոր Զուղայի Ս. Աստուածածին, Ս. Ստեփանոս, Ս. Յովհաննու եւ Ս. Մինաս եկեղեցիներում տեղի ունեցաւ եկեղեցական արարողութիւն: Սպահանցի հայոց թեմի Կրօնական խորհրդի նախաձեռնութեամբ եւ Նոր Զուղայի հայոց ազգ. «Քանանեան» աղջ. միջնակարգ դպրոցի ու «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի տնօրինութեան համագործակցութեամբ, սոյն դպրոցների աշակերտուհիները վերոնշեալ եկեղեցիներում մարմնատրեցին առակի տաս կոյսերին: «Քանանեան» դպրոցի աշակերտուհիները մասնակցեցին Ս. Աստուածածին եկեղեցու, իսկ «Արմէն» կրթահամալիրի աշակերտուհիները՝ միւս երեք եկեղեցիների ժամերգութիւններին:



Թեմիս Կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը նախագահեց Ս. Աստուածածին եկեղեցու արարողութեանը, որին մասնակցում էին արժն. Տ. Խաչատուր քննչ. Զարգարեանն ու դպրոց դասի ներկայացուցիչներ:

Կարգի ընթացքում ընթերցւեցին ստեղծագործութեան եւ Նոյ նախապետի ու Զրիեղեղի աստուածաշնչա-

կան դրագները, աստուածապաշտութեան ճանապարհին իմաստութեան կարեւորութիւնը շեշտող սուրբգրային հատւածներն ու երկնքի արքայութեանն անդրադարձող Տասը կոյսերի առակի անտարանական բաժինը: Վերջին ընթերցման պահին, առակի տաս կոյսերի դերը մարմնատրող երիտասարդուհիները, վառւած մոմեր իրենց ձեռքում պահած կանգնեցին եկեղեցու դասի առջեւ եւ նրանցից հինգը, որոնց ոչ-իմաստուն վիճակն էր բաժին հասել, մարեցին իրենց մոմերը:

Այնուհետեւ ներկաներին ու յատկապէս արարողութեանը մասնակց աշակերտուհիներին իր պատգամը փոխանցեց Կաթողիկոսական փոխանորդ Հայր Սուրբը: Նա իր խօսքն ուղղելով առակը ներկայացնող տաս երիտասարդուհիներին ասաց, որ մի թղթի կտորով չի ճշտում որեւէ անհատի յիմար կամ իմաստուն լինելը եւ մարդ արարածի իմաստութիւնը որոշում է իր միջոցով՝ սեփական ընթացքի ու վարմունքի արդիւնքում: Հայր Սուրբն իր խօսքի շարունակութեան մէջ նշելով, որ կեանքի ճիշտ ընթացքն ընտրելու համար հարկաւոր է ունենալ իմաստութիւն, որը գալիս է կեանքի փորձառութիւնից, յորդորեց՝ փորձառութիւնն անձնական սխալների հաշիւն աւելացնելու փոխարէն, օգուել ծնողների, ուսուցիչների եւ հոգեւոր հայրերի կեանքի փորձառութիւնից եւ դրանց բխած իմաստութիւնից:

Գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը վերջում աղօթելով առ Աստուած, որ երիտասարդներին շնորհի գլխատր իմաստութիւնը՝ մեծերի, ծնողների եւ աստուծային պատւիրանների նկատմամբ հնազանդ լինելը, մարած մոմերով երիտասարդուհիներից ուզեց մօտենալով միւս հինգին, իրենց մոմերը վառեն նրանց մոմերով՝ ի նշան այն իրողութեան, որ նրանց մէջ յիմար անձ գոյութիւն չունի:

**ԱՌԱԳ ՀԻՆԳՇԱՐԹԻ՝ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՏԱՏՄԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ
ԱՐԱՐՈՂՈՒԹԻՆ ԵՒ ՈՏԼԻՒՅԻ ԿԱՐԳ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ**

Ապրիլի 13-ի առաւօտեան, Առագ Հինգշաբթի օրւան յատուկ Ս. եւ անմահ Պատարագ մատուցեց Նոր Զուղայի Ս. Ստեփանոս եւ Ս. Մինաս եկեղեցիներում՝ ի յիշատակ «Վերջին ընթրիք»-ի պահին Յիսուս Քրիստոսի միջոցով իր մարմինն ու արիւնը խորհրդանշող Ս. Հաղորդութեան խորհրդի հաստատման:



Սպահանցի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը հերթաբար երկու եկեղեցիներում եւս ներկայ գտնւեց եւ նախագա-



հեց Ս. Պատարագին: Արարողութեանը մասնակցելու եւ օրւայ խորհրդին հաղորդ դառնալու համար, ժողովրդից բացի, Ս. Ստեփանոս եկեղեցում ներկայ էին

հայոց ազգ. «Արմէն» երկսեռ կրթահամալիրի սաները, իսկ Ս. Մինաս եկեղեցում՝ «Քանաճեան» աղջ. միջնակարգ դպրոցի աշակերտուհիները:



Ս. Ստեփանոս եկեղեցում պատարագեց արժն. Տ. Մեսրոպ առք. քհնյ. Գալստանեանը, իսկ Ս. Մինասում՝ արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանը, երգեցույթեամբ հանդէս եկան Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախմբի անդամները:

Գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէջնեանն օրան պատշաճ իր քարոզում հիմնականում դիմելով ներկայ աշակերտութեանը՝ կարելորեց հոգետոր ծնողների դերն ու ներկայութիւնը իրաքանջիւրի կեանքում: Նա նշելով, որ հոգետոր ծնողներ են համարուում ծխատէր քահանայ հայրը եւ մկրտութեան կնքահայրը, կարելոր համարեց նրանց հետ ժամանակ անցկացնելը՝ նրանց փորձառութիւններից օգտուելու համար:

Նոյն օրը երեկոյեան ժամը 5:00-ին, Ոսնկայի կարգը կատարեց Ս. Ստեփանոս, Ս. Յովհաննոս, Ս. Ներսէս եւ Ս. Գրիգոր Լուսատրիչ եկեղեցիներում:

Գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէջնեանը նախագահեց Ս. Ստեփանոս եկեղեցու արարողութեանը, որին մասնակցել էին նաեւ արժն. Տ. Մեսրոպ առք. քհնյ. Գալստանեանն ու եկեղեցու դպրաց դասը:



Հարկ է նշել, որ թեմիս Կրօնական խորհրդի նախաձեռնութեամբ եւ «Արմէն» երկսեռ կրթահամալիրի տնօրինութեան համագործակցութեամբ վերոնշեալ բոլոր եկեղեցիներում հոգետոր հայրերը լացին սոյն դպրոցի աշակերտների ուղերթը:

Կաթողիկոսական փոխանորդ Հայր Սուրբն աւարտին նշելով, որ ժամերգութիւնն սկիզբ առաւ «Սրբի ինձ զուպայի մշտիկով եւ ես մաքուր կը լինեմ» նախահասութեամբ, կարելորութեամբ ընդգծեց այն փաստը, որ արարողութեան ընթացքում առ Աստուած բարձրացած աղօթքում, խնդրում ենք Բարձրալին՝ զուպայի մշտիկի միջոցով եւ Ոսնկայի արարողութեամբ ոչ միայն մաքրի մեր մարմինն ու ուղերթը, այլեւ մանաւանդ մաքրի ու սրբի մեր մտքերը, սրտերն ու հոգիները:

ԱՌԱՊ ՀԻԵԳՇԱՔԹԻ ՕՐԻԱՅ ԵԶՐԱՓԼԿԻՉ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

ԽԱՒԱՐՄԱՆ ՀՍԿՈՒՄԻ ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԿԱՐԳԸ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Հինգշաբթի՝ ապրիլի 13-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Ոսնկայի արարողութեանը յաջորդեց Խաւարման հսկումի կարգը Նոր Զուղայի Ս. Ստեփանոս, Ս. Մինաս, Ս. Աստուածածին եւ Ս. Յովհաննոս եկեղեցիներում, որն ամբողջութեամբ լեցուն է հոգեթով շարականներով, երգերով ու աւետարանական ընթերցումներով:

մասնակցում էին նաեւ արժն. Տ. Մեսրոպ առք. քհնյ. Գալստանեանն ու եկեղեցու դպրաց դասը, երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբը:



Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէջնեանը նախագահեց Ս. Ստեփանոս եկեղեցու արարողութեանը, որին

ժամերգութեան ընթացքում «Ո՞ր ես մայր իմ» յուզիչ երգից յետոյ, մթութեան եւ լուութեան մէջ, ներկաներին իր հայրական պատգամը փոխանցեց գերայ. Հայր Սուրբը, ուր անդրադառնալով Խաւարման կարգում ընդգրկուած առաջին շարականի սկզբնական տողին, որտեղ ասած է. «Այսօր աստուածային ընթրիքի՝ քո ճշմարիտ Նոր Ուխտի կատարումն է», ակնարկ ունեցաւ

նան Ադամի ու Եւայի դրախտից արտաքսման պատմութեանը եւ ասաց, որ հազարամեակներ շարունակ մարդը չկարողացաւ վերջնականօրէն մի կողմ դնել չարութիւնը, մեղքը, սուտը եւ դրանց թագաւորին՝ աստանային. ուստի այսպիսի իրավիճակում անխուսափելի դարձաւ աստուածային միջամտութիւնը եւ Աստուած այնքան էր սիրում մարդուն, որ աշխարհ ուղարկեց Իր Միածին Որդուն՝ որպէս մարդկութեան փրկագին:

Հայր Սուրբն իր պատգամի շարունակութեան մէջ

անդրադառնալով Վերջին ընթրիքին ու Յուդայի մատնութեանը, կոչ արեց բոլորին, որ իրենք իրենց հարց տան՝ արդեօք ճիշտ կենցաղ են վարում, թէ՞ չարի ու ստի թագաւոր աստանայի ստրուկներն են դարձել: Նա յորդորեց՝ աստանայի ստրուկը լինելու պարագային, ապաշխարել, վերադառնալ սխալ ուղուց եւ հայեացքն ուղղել դէպի ճշմարիտ ու աստուածային ճանապարհ՝ երկնային արքայութեանը հասնելու համար:

ԱԿԱԳ ՈՒՐԲԱԹ՝ ՏԻՐՈՋ՝ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՉԱՐՉԱՐԱՆՔԻ ԵՒ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐԻԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ

Աւագ ուրբաթ՝ ապրիլի 14-ի երեկոյեան ժամը 6:30-ին, Սպահանի հայոց թեմի հոգեւորականաց ու դպրաց դասերը գլխաւորութեամբ թեմիս Կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի, Նոր Զուղայի Ս. Միհաս եկեղեցում կատարեցին Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Թաղման կարգը, որին ներկայ էին հոծ թուով հաւատացեալներ: Արարողութեանը մասնակցել էր նաեւ Ս. Ամենափրկչեան վանքի «Տաթեւ» երգչախումբը՝ Համիկ Ալեքսանդրեանի ղեկավարութեամբ:



Եկեղեցու դասի կենտրոնում, Ս. Խորանի մօտ, Քրիստոսի գերեզմանը խորհրդանշող սեղանի առջեւ, հոգեւորականաց դասի անդամներն առանձնաբար ընթերցեցին մեսիական չարչարանքներին ու զոհագործութեանն անդրադարձող աւետարանական հատուած-

ները, ապա ծնկի գալով սոյն գերեզմանի առջեւ երգեցին «Սուրբ Աստուած»-ը:

Փոխանորդ Հայր Սուրբն օրայ առթիւ իր քարոզում բնաբան ունենալով Քրիստոսի գալստեան մասին վկայութիւն տւած Երեմիա մարգարէի «Տէր ճանաչել տուր ինձ եւ ես կը ճանաչեմ» խօսքը՝ ասաց, որ Քրիստոսի մասին մարգարէների կատարած վկայութիւնները դարեր յետոյ իրականութիւն դարձան հենց Քրիստոսի միջոցով: Նա նշելով, որ Քրիստոսն աստուածային զօրութեամբ ու ճանաչողութեամբ ընտրեց իր աշակերտներին եւ անգամ աշխարհի ու մարդկութեան փրկութեան համար զոհաբերելու նպատակով ընտրեց Յուդային, ընդգծեց, թէ Քրիստոսն իր անձը զոհաբերելով դարձաւ մեր տէրը, փրկիչը, առաջնորդն ու ուսուցիչը: Նա իր խօսքի շարունակութեան մէջ շեշտելով, որ ճանաչողութեան կարողութեամբ կարող ենք հեռու մնալ նեղութիւններից, տառապանքներից ու նենգամտութիւնից, յորդորեց՝ նման կարողութիւն ունենալու դէպքում այն ի գործ դնել Աստծուն ճանաչելու ճանապարհին՝ մեր նկատմամբ ունեցած նրա հայրական սէրը տեսնելու համար:

Վերջում հաւատացեալները մօտենալով խորհրդանշական գերեզմանին՝ վերցրին այնտեղի ծաղիկներից, որպէսզի դրանց միջոցով իրենց բնակարանները տանեն Քրիստոսի կողմից շնորհւած նոր կեանքի անուշ բոյրն ու գեղեցկութիւնը:

Ս. ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ՝ Ս. ԶԱՏԿԻ ԾՐԱԳԱԼՈՅՅԻ ԵՒ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՆԵՐՈՎ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Ս. Զատիկի Ծրագալոցին, շաբաթ՝ ապրիլի 15-ի երեկոյեան ժամը 6-ից, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի եւ ձեռամբ արժն. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանի, Ս. Պատարագ մատուցեց Նոր Զուղայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում:

Պատարագի ընթացքում Կաթողիկոսական փոխանորդ Հայր Սուրբի միջոցով ընթերցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի Ս. Յարութեան տօնի պատգամը՝ «Ապրել ու վկայել Քրիստոսի յարութիւնը» խորագրով:



Ահա մի հատուածի մէջբերում Վեհափառ Հայրապետի պատգամից.

«Քրիստոսի յարութեամբ զօրացած պէտք է պայքարենք մոլորեցուցիչ ուսուցումների դէմ: Պատմութեան ընթացքում բազմաթիւ հերետիկոսութիւններ փորձեցին եկեղեցու վկայութիւնը լուծել: Իրենք լուծին: Ճշմարտութիւնը կարելի է հալածել, նոյնիսկ խաչել, բայց կարելի չէ գերեզմանել: Այսօր եւս շրջապատւած ենք տեսանելի եւ ոչ-տեսանելի հերետիկոսութիւններով: Քրիստոնեան պէտք է մերժի չարը եւ դառնայ գործակիցը բարու, պէտք է մերժի խաւարը եւ դառնայ առաքելը լուսի, պէտք է մերժի կեղծը եւ դառնայ դրօշակիրը ճշմարտութեան»:



Վերջում ներկաները հաղորդութիւն ստացան, ապա ստանալով Յիսուս Քրիստոսի հրաշափառ յարութեան աւետիսը, իրենց հետ տուն տարան արարողութիւնից ստացած օրհնութիւնը:

Յաջորդ օրը, կիրակի՝ ապրիլի 16-ի առաւօտեան, Փրկչի յաղթական յարութեան տօնի՝ Ս. Զատկի առթիւ, հանդիսատար Ս. Պատարագ մատուցեց Նոր Զուղայի Ս. Յովհաննու եկեղեցում՝ ձեռամբ գերայ. Ս. Սիփան Ծ. վրդ. Քէշէճեանի: Արարողութեանը մասնակցել էր նաեւ արժն. Ս. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանը:

Յընթացս Ս. Պատարագի Հայր Սուրբն «Յարութեան յաղթանակ՝ հնազանդելով աստուծային պատկրաններին» խորագրով իր պատգամն ուղղեց հոծ բազմութեանը, ուր անդրադառնալով քրիստոսի խաչելութեանն ու յարութեանը եւ յատկապէս մերօրեայ ժա-

մանակաշրջանում մարդ արարածի ամբողջովին աշխարհական դառնալու փաստին, ասած էր. «Թող յարութեան այս տօնը լաւագոյն առիթը նկատուի, որպէսզի անդրադառնանք մեր ընթացքին եւ ուղղութեանը: Վեհափառ Հայրապետի հոշակագրով որոշուած «Ինքնաքննութեան եւ ինքնասրբագրութեան», բայց մանաւանդ՝ «Վերանորոգութեան» տարին գործադրելու յարմարագոյն առիթը, եթէ արդէն իսկ չենք սկսել, թող այս Զատկւայ տօնը լինի: Եկէ՛ք միասնաբար, ազգովի՝ որպէս մէկ սիրտ եւ մէկ հոգի, մէկ միտք եւ մէկ կամք, մեր տիպար օրինակը դարձնենք մեր հրաշափառ յարուցեալ Տիրոջն ու Փրկչին՝ Յիսուս Քրիստոսին եւ Աստուծորդու քայլերին հետեւելով՝ ընթանանք Աստծու ճանապարհով...»:



Վերոնշեալ զոյգ արարողութիւնների երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ Արմէն Ամիրխանեանի ղեկավարութեամբ:

Յատկանշելի է, որ Ծրագալուցի առթիւ Ս. եւ անմահ Պատարագ մատուցեց նաեւ Ս. Ստեփանոս, Ս. Յովհաննու եւ Ս. Ներսէս եկեղեցիներում, իսկ Յարութեան տօնի առթիւ՝ Ս. Աստուծածին, Ս. Մինաս եւ Ս. Ստեփանոս եկեղեցիներում: Զատկական արարողութիւնների ընթացքում՝ որպէս օրւայ քարոզ պատարագիչ քահանայ հայրերն ընթերցեցին գերայ. Հայր Սուրբի վերոնշեալ պատգամը:

Կիրակի՝ երեկոյեան ժամը 6-ից, գերայ. Ս. Սիփան Ծ. վրդ. Քէշէճեանը Ս. Ամենափրկչեան վանքի Ծաղկեայ դահլիճում ընդունեց ազգայինների եւ համայնքի անդամների շնորհաւորանքները՝ տօնի կապակցութեամբ:

ՓԵՐԻԱ ԳԱԽԱՌԻ ԼՈՒՍԱՀԱՆԳԻՍՏ ՍՐԲԱՎԱՅՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅԻՆՑ ԱՄԵՆԱՄԵԱՅ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Սպահան նահանգի Փերիա գաւառի Ներքելի Խոյզան գիւղի մօտակայքում, բլրի վրայ գտնուող «Լուսահանգիստ» սրբավայրում, ուր ամփոփուած է 1622 թւականին, հաւատի ճամբին նահատակուած Գրիգոր Արփայեցիի աճիւնը, ուրբաթ՝ ապրիլի 28-ի առաւօտեան տեղի ունեցաւ ամենամեայ հոգեհանգստեան արարողութիւնը: Կարգը կատարեց նահատակի շիրիմի վրայ կառուցուած մատուռի առջեւ՝ նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերայ. Ս. Սիփան Ծ. վրդ. Քէշէճեանի եւ մասնակցութեամբ արժ. Ս. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանի, արժ. Ս.

Խաչատուր քհնյ. Զարգարեանի ու դպրաց դասի ներկայացուցիչների:



Քանի որ սույն արարողության աանդական օրը՝ Ս. Յարութեան տօնին յաջորդող առաջին ուրբաթը, զուգադիպել էր Հայոց Ցեղասպանության 102-ամեակի ոգեկոչման ժամանակաշրջանին, թեմիս Կրօնական խորհուրդը յարմար նկատեց այս տարի կարգը կատարել մէկ շաբաթ ուշացումով:



Հոգեհանգստեան պաշտօնին յաջորդեց թեմիս կաթողիկոսական փոխանորդ Հայր Սուրբի պատգամը: Նա անդրադառնալով նահատակի կեանքին՝ շեշտեց, թէ հակառակ այն իրողությանը, որ Գրիգորի եւ նրան ժամանակակից հաւատացեալ ժողովրդի կեանքում առկա են եղել բազմաթիւ դժարութիւններ ու չարչա-

րանքներ, սակայն նրանք միշտ իրենց երախտագիտութիւնն են դրսեւորել Աստծու նկատմամբ՝ իրենց աղօթքների ճամբով: Գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանն իր խօսքի շարունակութեան մէջ յորդորեց. «Այս արարողութիւնից յետոյ մեր կեանքի տիպարը դարձնել Գրիգոր Այրփայեցուն եւ նրա հաւատից օրինակ վերցնելով, փորձենք լուսաւորել մեր միտքն ու սիրտը եւ մեր երախտագիտութեան աղօթքը ուղղենք առ Աստուած»:

Վերջում ուխտաւորները «Տէրունական աղօթք» բարձարցրին առ Աստուած, խունկ ծխեցին եւ մոմ վառեցին, այնուհետեւ գարնանային պայծառ ու հաճելի օրւայ մնացած բաժինն անցկացրին բնութեան գրկում:

Հոգեհանգստեան կարգին ներկայ էին՝ ազգային մարմինների ներկայացուցիչներ ու հոծ թւով ուխտաւոր ժողովուրդ:

Հարկ է նշել, որ այս տարի Կրօնական խորհրդի նախաձեռնութեամբ եւ Քրիստոնէական Դաստիարակութեան խորհրդի միջոցով տպագրւել էին Գրիգոր Արփայեցիի կեանքին ու բոլորանէր գործունէութեանն անդրադարձող բրիւշուրներ, որոնք բաժանեցին ուխտաւորներին:

ՎԱՃԱՌՔ «ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՏՕՆ»-Ի ԱՌԻԹՈՎ

Չորեքշաբթի՝ 2017 թականի մարտի 8-ին, Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը ընկերակցութեամբ Կրօնական խորհրդի ատենապետ պրն. Վարուժ Մովսիսեանի, անակնկալ կերպով այցելեց Նոր Զուղայի հայոց ազգային «Արմէն» երկսեռ կրթահամալիր, որտեղ «Բարեգործական տօն»-ի (جشن عاطفها) առիթով կազմակերպւել էր տնային ուտեստների վաճառք: Դպրոցի տեսչութեան կարգադրութեամբ սույն ձեռնարկի ընթացքում նաեւ տեղի ունեցաւ աշակերտական «Ռոշդ» ամսաթերթի փառատօնը, որի նպատակն է զարգացնել աշակերտների մտային կարողութիւններն ու ստեղծարար ունակութիւնները:



Սույն ծրագրի հասցի մէկ մասը յատկացւելու է դպրոցի կարիքները հոգալուն, իսկ մեծ բաժինը՝ կարիքաւոր աշակերտներին օժանդակութիւն եւ աջակցութիւն ցուցաբերելու նպատակին:

Ծրագիրն իրականացնելու համար, տարրական բաժնի ծնողների միջոցով պատրաստւել էին զանազան տեսակի ուտեստներ, որոնք տեսչութեան կարգադրութեամբ ու ծնողական խորհրդի համագործակցութեամբ եւ աշակերտների ու նրանց ծնողների միջոցով մատուցեց ներկաներին: Դպրոցի բակում ներկայ էին ոչ միայն պատասխանատուները, աշակերտներն ու նրանց ծնողները, այլեւ աշակերտների բարեկամ-հարազատներն ու ընտանեկան այլ պարագաները: Գնահատելի եւ ուրախալի երեւոյթ էր ծնողների բուռն մասնակցութիւնը սույն ծրագրին:



Գերպ. Հայր Սուրբը եւ պրն. Մովսիսեանը շփուելով ծրագրի մասնակիցների հետ՝ գնահատեցին եւ քաջալերեցին նրանց՝ բարեգործական նպատակով այս ծրագրին մաս կազմելու եւ նեցուկ հանդիսանալու համար:

«ՍՊԱՀԱՆ՝ ԻՄ ԳԵՂԵՑԻԿ ՔԱՂԱՔ» ԽՈՐԱԳՐՈՎ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՄՐՅՈՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆՂԵՄ՝ «ՔԱՆԱՆԵԱՆ» ԴՊՐՈՑԻ ՅԱՐԿԻ ՏԱԿ

Նոր Զուղայի հայոց ազգ. «Քանանեան» աղջ. միջնակարգ դպրոցի տնօրինութեան եւ անձնակազմի նախաձեռնութեամբ, ազգ. կրթահամալիրի կենտրոնական սրահում, մարտի 12-15-ը կազմակերպել է լուսանկարչութեան մրցոյթ-ցուցահանդէս՝ «Սպահան» իմ գեղեցիկ քաղաք» խորագրով, ուր ցուցադրել են աշակերտուհիների լուսանկարները՝ Սպահան քաղաքի կոթողներից եւ արւեստից: Այս շրջագծում ցուցադրել են նաեւ Նոր Զուղայի եկեղեցիներից նկարներ, որոնք տրամադրել է Թովմա Գալստանեանը:



Միջոցառման պաշտօնական բացումը կատարեց շաբաթ՝ մարտի 11-ի առաւօտեան, ներկայութեամբ՝ Սպահանի հայոց թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի, Ծահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերայ. Տ. Անանիա ծ. վրդ. Գունանեանի, Սպահան քաղաքի 3-րդ շրջանի Կրթադաստիարակչութեան հիմնարկի եւ թեմիս ազգային մարմինների ներկայացուցիչների, հայոց ազգ. դպրոցների տեսչությունների, կազմակերպիչ դպրոցի աշխատակազմի, ծնողական խորհրդի ու ծնողների եւ մի շարք այլ հրաւիրեալների:



Սկզբում ցուցահանդէսի խորհրդանշական ժապաւելնը միասնաբար հատեցին գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանն ու քաղաքի 3-րդ շրջանի Կրթադաստիարակչութեան հիմնարկի ներկայացուցիչ պրն. Սեփեանին, ապա բացման խօսքով հանդէս եկաւ դպրոցի ուսուցչուհի եւ գրադարանավարուհի Կարին Տէր-Մարտիրոսեանը՝ կարեւորութեամբ նշելով, թէ ցուցահանդէսի թեման մեծ ոգեւորութիւն է առաջացրել աշակերտութեան մօտ՝ նրանց խթանելով առաւել խորը հաշտեցրով եւ նոր դիտանկիւնից ընկալելու քաղաքի գեղեցկութիւնը:

Յաջորդիւ իրականացեց աշակերտական ելոյթ, որտեղ հնչեցին դուատանքի խօսքեր՝ հինաւուրց քաղաքի մասին եւ բացատրութիւններ տրւեցին Սպահանի կոթողային շինութիւնների, արւեստի ու շինարարական կառուցի շուրջ: Այս բաժինն համեմեց խմբական երգերի շարանով:

Աշակերտական ելոյթից յետոյ արտայայտեց դպրոցի տեսչուհի տկն. Սալառիֆառը, ով ողջունելով ներկաներին, խօսեց Սպահան քաղաքում ծնունդ առած արւեստների մասին: Նա իր խօսքի շարունակութեան մէջ անդրադառնալով քաղաքի արւելի քան 400 տարի անցեալ ունեցող հայ համայնքին՝ կարեւորութեամբ ընդգծեց տեղի հայ բնակչութեան առանցքային դերակատարութիւնը՝ Սպահանի տնտեսութեան եւ մշակոյթի զարգացման գործում, ինչու չէ նաեւ շնորհաշատ հայ կանանց վարպետութիւնը ձեռարւեստի զանազան ոլորտներում:



Արտայայտեց նաեւ թեմիս Կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը, որը մատնանշելով Սպահան քաղաքի հարուստ մշակոյթը եւ գեղեցիկ բնութիւնը, նման հիասքանչ քաղաքում բնակւելը մեծ բախտաւորութիւն համարեց բոլորի՝ ի մասնաւորի հայ համայնքի համար:

Հայր Սուրբը դուատանքի խօսք արտասանեց քաղաքի անգլուգական գեղեցկութեան կապակցութեամբ՝ շեշտելով, որ Սպահանն իրօք վաստակել է իր «Նեսֆէշահան» կոչումը: Կաթողիկոսական փոխանորդն իր խօսքն աւարտեց խոստովանելով, որ իր համոզմամբ Սպահանի գեղեցկութեան կիզակէտում է յայտնաւոր Նոր Զուղան:

Վերջում գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի եւ գերայ. Տ. Անանիա ծ. վրդ. Գունանեանի ձեռամբ, դպրոցի անունից յուշանւէրներ շնորհեցին լուսանկարիչ պրն. Արաբին՝ աշակերտուհիներին լուսանկարչական մասնագիտական հիմունքներն ուսուցանելու, Թովմա Գալստանեանին՝ Նոր Զուղայի եկեղեցիներից նկարներ տրամադրելու, իսկ ժանեստ Սիմոնեանին՝ ցուցահանդէսի կազմակերպման գործում ցուցաբերած անվերապահ աջակցութեան համար:

Բացման հանդիսութեան աւարտին ներկաներն աւոյթ ունեցան դիտելու լուսանկարները, որոնցում ոչ միայն արտացոլւած էր քաղաքի գեղեցկութիւնը, այլեւ այն մեծ սէրը, որը երիտասարդ լուսանկարիչները տաժում են իրենց ծննդավայր քաղաքի նկատմամբ:

Նշելի է, որ մրցոյթի արդիւնքը յայտարարուելու է ցուցահանդէսի վերջին օրը

ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ ԿԱՅԱՑԱԻ ԳԵՈՐԳ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ «ՀԱՄԱԶԱՍԿ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Հայ Դատի «Արձագանք» քարոզչական յանձնախմբի նախաձեռնությամբ, հինգշաբթի՝ մարտի 16-ի երեկոյան, Նոր Զուղայի հայոց ազգ. կրթահամալիրի «Ալեկուշ Տէրեան» սրահում, կայացավ «Համազասպ» գրքի շնորհանդէսը, որի հեղինակն է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հայ գաղթօջախների և Սփիւրքի պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Գեորգ Ստեփանեանը:

Հայ ռազմական, հասարակական, քաղաքական և պետական ակնառու գործիչ, հայոց պետականության հիմնադիրներից և ՀՅԴ մարտական փառանգի ամենապայծառ դէմքերից Համազասպ Սրանձտեանի կեանքին ու գործունեությանը անդրադարձող այս մենագրությունը լոյս է տեսել 2016 թականին: Գրքի տպագրության մեկնաստիությունը յանձն է առել շրջանիս Հայ Դատի յանձնախումբը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության 125-ամեակի և Փետրարեան ապստամբության 95-ամեակի առիթներով:



Շնորհանդէսին ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէշեճեանը, Հայ Դատի յանձնախմբի անդամները, հոգեւորականաց դասի, ազգային մարմինների, դպրոցների ու միությունների ներկայացուցիչներ և ընթերցասէր ժողովուրդ: Նշելի է, որ միջոցառմանը մասնակցել էին նաեւ Հայաստանից հրաւիրած հիւրեր՝ աշխատության հեղինակը և գրախօսներ՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, Հայ հասարակական մտքի և մամուլի պատմության բաժնի վարիչ դոկտոր-պրոֆեսոր Ալբերտ Խառատեանն ու Խ. Աբովեանի անուն մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի դասախօս, պատմական գիտությունների թեկնածու-դոցենտ Աւետիս Յարութիւնեանը:

Սկզբում ողջոյնի խօսք ասաց երեկոյի հանդիսավար Մանիա Ղուկասեանը, ապա ելոյթ ունեցավ Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ Վահէ Թորոսեանը: Նա դրատելով հեղինակի կատարած լայնածաւալ աշխատանքը՝ կարեւորությամբ ընդգծեց, որ աշխատությունը հայ ժողովրդին իր ծառայությունն է մատուցել հետեւեալ չորս ուղղություններով. առաջին՝ իրականություն է

դարձրել ՀՅԴ գաղափարախօս-տեսաբան և պատմագիր Միքայէլ Վարանդեանի վաղեմի փափագի մի բաժինը՝ հերոսների փոթորկալից ապրումները գրառելու կապակցությամբ. երկրորդ՝ բաւարարել է Համազասպի աագ որդի Գարեգինի ցանկությունը՝ իր հօր բարի անունը վերականգնելու ուղղությամբ, որը պատմության աղաւաղման քաղաքականության հետեանքով այլ կերպ է ներկայացւել հանրությանը. երրորդ՝ որպէս փաստավաւերագրական հարուստ շտեմարան՝ լոյս է սփռել պատմական ճշմարտության վրայ և չորրորդ՝ ծառայել է մատաղ սերնդի հայեցի դաստիարակության գործին:

Այնուհետեւ ցուցադրեց փետրարի 17-ին Երեսնում տեղի ունեցած սոյն գրքի շնորհանդէսի տեսագրությունից մի հատւած, ուր հնչել էր Համազասպին նիրաւ երգը ազատամարտերի երգերի կատարող Սահակ Սահակեանի միջոցով և գրախօսական ելոյթ էր ծաւալել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրէն դոկտոր-պրոֆեսոր Աշոտ Մելքոնեանը:

Յաջորդիւ արտայայտեցին գրախօսներ՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս դոկտոր-պրոֆեսոր Ալբերտ Խառատեանն ու պատմական գիտությունների թեկնածու-դոցենտ Աւետիս Յարութիւնեանը:



Պրն. Խառատեանը նշելով, որ վիթխարի փաստեր և արխիւային նիւթեր են ընդգրկւած գրքում, անդրադարձաւ հեղինակի կատարած տքնաշան աշխատանքին ու շարունակեց, թէ փաստավաւերագրական այս հաստաձաւալ գիրքն ունի շատ ճկուն զարգացում և ճիշտ լեզու, որոնցով իւրայատուկ շունչ է հաղորդւել նրան:

Պրն. Յարութիւնեանն իր գրախօսականում նախ թւարկելով Գեորգ Ստեփանեանի իրագործած մի շարք աշխատությունները, որոնցով լուսարձակի տակ են առնւել 1918-ից 1920 թականներին Գանձակում և Բաքում իրականացւած հայերի ցեղասպանությունը և ինքնապաշտպանության մարտերը, շեշտեց, որ այդ աշխատությունները պատմագիտական առումով տպաւորիչ ապտակ են հասցնում ադրբեջանական և թուրքական պատմագրության այն ներկայացուցիչներին, ովքեր ելնելով քաղաքական մի շարք նպատակներից,

փորձում են աղաաղել փաստերը եւ նենգափոխել իրականությունը: Նա իր խօսքը շարունակեց հիմնականում համառօտ կերպով անդրադարձ ունենալով գրքի եօթ գլուխների բովանդակությանը, ուր ներկայացւած են հերոսի կեանքի եւ գործունէութեան զանազան ժամանակաշրջանները:



Խօսքերի բաժինը եզրափակեց հեղինակի արտայայտութիւններով: Պատմական գիտութիւնների դոկտոր-պրոֆեսոր Գէորգ Ստեփանեանն իր խօսքում յատկապէս նշեց, որ նիւթերի հաւաքագրման եւ ուսումնասիրման գործում հանդիպել է մեծ դժարությունների, քանի որ խորհրդային միութեան ժամանակաշրջանում ոչ միայն Դաշնակցութեան եւ ֆիդայական շարժումների մասին խօսելն արգելւած է եղել, այլեւ որոշ անհատների, այդ թւում նաեւ Համազասպին պիտակաւորել են անհիմն մեղադրանքներով: Նա իր խօսքի շարունակութեան մէջ անդրադառնալով հերոսի կեանքին ու գործունէութեանը, համառօտ կերպով ներկայացրեց պատկան դրագներից մի քանիսը:

Ահա մի հատուածի մէջբերում հեղինակի ելոյթից.
 «Բաքի հերոսամարտի պատմությունը խորհրդային պատմագրութեան ամենակեղծւած շրջաններից է: Առաջին համաշխարհային պատերազմից յետոյ, թուրքական զօրքերը նպատակ ունէին գրաւելով Բաքուն, մտնել Արցախ եւ Զանգեզուր, ուր միանալով իրենց 3-րդ եւ 4-րդ զօրախմբերին պէտք է շրջապատէին ամ-

բողջ Արեւելահայաստանը եւ արեւելահայութեանը ենթարկէին ցեղասպանութեան: Սակայն սույն ծրագիրը կասեցւեց ոչ միայն Մայիսեան հերոսամարտերի, այլեւ Բաքի հայութեան ինքնապաշտպանութեան շնորհիւ, որը կազմակերպեց ՀՅԴ Բաքի Կենտ. Կոմիտէն ու Բաքի հայոց ազգ. խորհուրդը՝ յանձնին Դաշնակցութեան հիմնադիրներից Ռոստոմի ...: Այս հերոսամարտի մարտունակ ուժերից երրորդ բրիգադը ղեկավարում էր Համազասպ Սուանձտեանը: Թէեւ ուժերի անբարարութեան պատճառով թուրքերը գրաւում են Բաքուն եւ կոտորածի ենթարկում 30,000-ից ւելի տեղի հայութեանը, սակայն հայկական կողմի մղած 4-ամսեայ հերոսական կռիւների պատճառով ուժերը քամած թշնամու բանակը այլեւս ի վիճակի չի լինում մտնել Արցախ»:

Գէորգ Ստեփանեանն իր խօսքի վերջին բաժնում կարեւորելով հայ ազատամարտի պատմութեան երեւելի գործիչների մասին գրելը՝ իր երախտիքի խօսքն ուղղեց շրջանի Հայ Դատի յանձնախմբին՝ գրքի տպագրութիւնը հովանաւորելու համար: Նա յայտարարեց նաեւ, որ զբաղւում է մի այլ աշխատութեան ամբողջացման ուղղութեամբ՝ նկատմամբ Համազասպի ընկեր Արշակ Գաւաֆեանին՝ Քեռիին:



Ծրագիրն ավարտեց մեներգիչ Կարէն Օհանեանի միջոցով յեղափոխական ոգեշնչող երգերի կատարմամբ: Մեներգիչն երգեհոնի նագակցութեամբ ընկերակցեց Արին Խաչիկեանը:

ԱՊՐԻԼԵԱՆ ՔԱՌՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՍԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՀՈԳԵՀԱՆՎԱՍՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ



Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի եւ շրջանի Հայ Դատի յանձնախմբի համատեղ նախաձեռնութեամբ, շաբաթ՝ ապրիլի 8-ի երեկոյեան, Նոր Զուղայի Ս. Գէորգ եկեղեցում, Կիրակնամուտի ժամերգու-

թեան ավարտին, նախագահութեամբ թեմիս Կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի եւ մասնակցութեամբ քահանայից ու դպրաց դասերի հոգեհանգստեան պաշտօն իրականացւեց՝ 2016 թուականի ապրիլին, Արցախի քառօրեայ պատերազմի ընթացքում նահատակւած հայորդիների յիշատակին:

Արարողութեան ավարտին ներկաներին իր սրտի խօսքը փոխանցեց Կաթողիկոսական փոխանորդ Հայր Սուրբը, որը յիշելով ի գին իրենց թանկագին արեան քառօրեայ պատերազմից յաղթական դուրս եկած քաջարի հայ մարտիկներին, ընդգծեց, թէ նահատակների ազնիւ արիւնը ներծծած հայրենի հողից ծլարձակւելու են արդարութիւն, խաղաղութիւն եւ հանգստութիւն՝ հայ ժողովրդի ու հայրենիքի համար:

Վերջում բոլորը խնկարկեցին զոհւածների անմոռաց յիշատակին:

Արարողութեանը ներկայ էին թեմիս ազգային մարմինների եւ Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչներն ու հոծ թուով ժողովուրդ:

Պաշտօնի ընթացքում երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբը:



ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳ. ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ՄԱՆԵՐԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ` ԾԵՐԱՆՈՑ` Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻ

Երեքշաբթի՝ ապրիլի 18-ի առաւօտեան Նոր Զուղայի հայոց ազգային մանկապարտէզի Դեղին խմբակի սաները, դպրոցի դաստիարակների ու ծնողական խորհրդի ներկայացուցիչների ուղեկցութեամբ այցելեցին հայոց ազգ. ծերանոց՝ տեղի բնակիչներին Ս. Յարութեան տօնը շնորհաւորելու եւ գարնանային պայծառ առաւօտն այս հանգստի տան բարեհամբոյր եւ սիրալիք անձնատրուրութիւնների հետ վայելելու համար:

Ճանել շնորհակալական խօսքով՝ սոյն հարազատ յարկի տակ հիւրընկալւելու կապակցութեամբ:



Սկզբում այցելուներին ջերմ դիմաւորեցին Կանանց գթութեան միութեան վարչութեան անդամուհիները, ապա կենտրոնական դահլիճում սկիզբ առաւ տօնական միջոցառումը, որտեղ ողջոյնի խօսք ասաց ճշւած վարչութեան նախագահուհի Արմինէ Սիմոնեանը՝ շնորհաւորելով Զատկական տօնի կապակցութեամբ եւ շնորհակալութիւն յայտնելով դպրոցի տեսչութեանն ու ուսուցչական կազմին այցելութիւնը նախաձեռնելու համար:

Միջոցառումն ընթացաւ մտերմիկ մթնոլորտի ներքոյ: Սկզբում սաները գեղեցիկ երգերից ու արտասանութիւններից կազմած մի փունջ նւիրեցին տարեց բնակիչներին, ապա օր առաջ դպրոցում նրանց փոքրիկ ձեռքերով ներկած հակիթները բաժանեցին ներկաների միջեւ՝ աւանդական հակթաղան իրականացնելու համար: Զարճալի խաղին յաջորդեց ուրախ մեղեդիների ներքոյ պարը:

Այնուհետեւ արտայայտեց ճանել Դեղին խմբակի դաստիարակ Սքարլետ Հայրապետեանը՝ տօնի առթիւ ջերմ մաղթանքներով ու շնորհաւորանքներով, ինչու չէ

Ծարունակութեան մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որից յետոյ դպրոցի կողմից սաները նւիրեցին փոխանցեցին տարեցներին, իսկ իրենք նոյնպէս նւիրեցին ստացան Կանանց գթութեան միութեան վարչութիւնից:

Վերջում ծերանոցի բնակիչներին առողջութիւն եւ երկար կեանք մաղթելով՝ այցելուները վերադարձան մանկապարտէզ՝ որպէս անմոռանալի յուշ իրենց հետ տանելով տատիկների հետ ունեցած գեղեցիկ ու հաճելի պահերը:

**ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅ Մ. Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ «ԿՈՈՒՆԿ» ԴԱՐԱՆՈՒՄԲԸ
ՀԱՆԴԵՍ ԵԿԱԹ ՏԱՐԵԿԱՆ ԵԼՈՅԹՈՎ**



2017 թվականի մարտի 11-ի երեկոյան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի «Կոունկ» պարախումբը, ղեկավարութեամբ պարուսոյց Նունէ Մկրտչեանի, նոյն միութեան հանդիսութիւններին դահլիճում հանդէս եկաւ տարեկան ելոյթով: Ծրագրի սկզբում հանդիսատեսին ողջունեց հանդիսավարուհի Սօսէ Ասատրեանը, ով բնութագրելով պարը որպէս մարդկային հոգու, յոյզերի ու ապրումների դրսեւորում, հակիրճ կերպով ներկայացրեց «Կոունկ» պարախմբին և պարուսոյցին՝ ամփոփ զեկոյց ներկայացնելով Իրանում և արտերկրում իրականացրած խմբի յաջող ելոյթների մասին, որից յետոյ պարախմբի կրտսեր և աւագ սաները հանդէս եկան հայ և օտար ազգերի, ինչպէս նաեւ ժամանակակից և մանկական պարային 24 գեղեցիկ և անթերի խմբական կատարումներով և մենապարերով, որոնք արժանացան հանդիսատեսի բուռն ծափողջոյններին:

թեանը և հանդիսատեսին՝ միջոցաւմանը ներկայ լինելու և խրախուսելու համար:



Երեկոյի եզրափակիչ խօսքը վերապահւած էր Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ՝ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանին: Հայր Սուրբը նախ իր ուրախութիւնը յայտնեց Նոր Զուղա վերադառնալու կապակցութեամբ և խոստովանեց, որ իր միամտեայ բացակայութեան ընթացքում ապրել է կարօտի զգացում՝ հանդէպ Նոր Զուղայի: Անդրադառնալով «Կոունկ» համոյթի իրականացրած ելոյթին, բարձր գնահատեց այն և արժեւորեց այսպէս. «Կոունկ»-ի կատարումները իմ մտքի, հոգու և սրտի մէջ կաթիլ առ կաթիլ սրկեցին հայ մշակոյթի աւիւնը՝ վերաթարմացնելով և վերաշխուժացնելով իմ ներաշխարհը: Եթէ հայ բանակայինները պաշտպանում են հայրենիքը, «Կոունկ» համոյթը «Արարատ» միութեան հովանու ներքոյ պայքարում է հայ մշակոյթի պահպանման համար. այն անցել է յաջողութեան սահմանները և գնում է դէպի մասնագիտութիւն»: Հայր Սուրբն իր խօսքի շարունակութեան մէջ շնորհատրանքի և քաջալերանքի խօսք ասաց Մշակութային միաւորի վարչութեանը և պարախմբին՝ արական խմբի վերականգրման կապակցութեամբ: Գնահատանքի և շնորհատրանքի խօսքեր ուղղեց նաեւ միութեան պատասխանատուներին, պարուսոյցին, պարախմբի անձնակազմին և բոլոր նրանց, որոնց համագործակցութեամբ իրականացաւ ծրագիրը:



Ծրագիրը եզրափակեց խանդավառ երաժշտութեան ներքոյ՝ բոլոր մասնակիցների բեմ ելնելով և խմբի ղեկավարին բեմ հրաւիրելով, ով արտայայտեց շնորհակալական խօսքեր՝ ուղղւած միութեան Կենտրոնական և Մշակութային միաւորի վարչութիւններին, խմբի անդամներին և ծնողներին, որոնց համագործակցութեան շնորհիւ իրականացաւ երեկոն: Նունէ Մկրտչեանը շնորհակալութիւն յայտնեց նաեւ ազգային իշխանու-

Հանդիսատեսը գոհունակութեամբ և տպաւորութիւններով լեցուն թողեց դահլիճը:



ԻՐԱՆԱՀԱՅ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ 29-ՐԴ ԽԱՂԵՐԸՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ

Հայոց բանակի կազմաորման 25-ամեակին նվիրված իրանահայ Գարնանային 29-րդ խաղերի հանդիսատեսները տեղի ունեցավ կիրակի՝ մարտի 19-ի ժամը 19:30-ին, Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միության մարզասրահում: Հանդիսությունը իրենց ներկայությամբ պատել էին Սպահանի Հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ՝ Ս. Սիսիան ծ. վրդ. Քեչեճեանը, Ծափինջահրի հայ համայնքի հոգևոր տեսուչ՝ Ս. Անանիա ծ. վրդ. Գունանեանը, ԻԻ խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ժորժիկ Աբրահամեանը, ազգային մարմինների ու միությունների ներկայացուցիչները, Հայ Դատի շրջանիս յանձնախմբի անդամները, հոգևորականաց դասը, Հ.Մ.Ա.Կ.-ի Կենտրոնական վարչութեան նախագահ՝ Գեորգ Վարդանը, Սպահանի մարմնակրթութեան եւ քաղաքային խորհուրդների ներկայացուցիչները, Միութեան արտօնատէրեր՝ Թաթուլ Օհանեանը եւ Ալլիկ Մելիքեանը, միութենականները եւ հոծ բազմութիւն:



Խաղերը պաշտօնապէս բացւած յայտարարեց երեկոյի հանդիսավարուհի՝ Մանիա Ղուկասեանը, ով հանդէս եկաւ հայերէն եւ պարսկերէն լեզուներով ողջոյնի եւ բացման խօսքով: Յաջորդիւ միութեան Սկսուտական միատրի Արի-Արեւուշական եւ Երէց հատւածների ներկայացուցիչների մասնակցութեամբ կատարեց դրօշակի արարողութիւն եւ ներկաների յոտնկայս ունկնդրութեամբ հնչեց Իրանի Իսլ. Հանրապետութեան օրհներգը, ապա տեղի ունեցաւ մարզական պատիրակութիւնների խանդավառութեամբ լեցուն տողանցք-շքերթը՝ մասնակցութեամբ Հայաստանի Գիւմրի քաղաքի, Թեհրանի Հայ մշակութային «Արարատ» կազմակերպութեան (Հ.Մ.Ա.Կ), Թաւրիզի եւ Ուրմիայի Հ.Մ.Ա.Կ.-ի մասնաճիւղերի, Հայ Ոս. «Չհարմահայ» միութեան, Հայ Մ.Մ. «Սարդարապատ» միութեան, Հայ Մ.Մ. «Րաֆֆի» համալիրի, Նոր Զուղայի «Սեւան» մարզական միութեան, Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան եւ Ծափինջահրի մասնաճիւղի մարզական խմբերի, որից յետոյ մարզական փառատօնի առթիւ ողջոյնի խօսքով ելոյթ ունեցաւ կազմակերպիչ միութեան Կենտրոնական վարչութեան նախագահ՝ Մասիս Միմասեանը, ով ողջունելով բոլորի ներկայութիւնը, մեծ



պատիւ եւ ոգեւորութեան առիթ համարեց՝ «Արարատ» միութեան յարկի ներքոյ հիւրընկալելու հայրենիքի եւ իրանահայ մարզական պատիրակութիւններին եւ նրանց ներկայութեամբ ու միասնական ջանքերով մարզական փառատօն անց կացնելու կարեւոր հանգամանքը: Պրն. Միմասեանը ակնարկ կատարեց նաեւ խաղերի նկրտութեանը, որով վերաբեւոյնելու է հայոց բանակի 25-ամեայ ուղին: Նա մարզիկ-ուհիներին մաղթեց յաջողութիւն եւ մեծ յաղթանակների նւաճում: Յաջորդիւ Սպահանի Հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ՝ Ս. Սիսիան ծ. վրդ. Քեչեճեանը հանդէս եկաւ հայրական պատգամով: Հայր Սուրբը բարձր գնահատելով իրանահայ 29-րդ Գարնանային խաղերի կազմակերպումը, իր ուրախութիւնը յայտնեց՝ խաղերը Հայոց բանակի կազմաորման 25-ամեակին նվիրելու կապակցութեամբ, ինչպէս նաեւ Հայաստանի Գիւմրի քաղաքից եւ իրանահայ երեք թեմերից մարզական պատիրակութիւնների հիւրընկալութեան առիթով՝ այն համարելով փոխադարձ սիրոյ ու յարգանքի դրսեւորում, նշելով, որ հայրենիքից ժամանած մարզիկների ներկայութիւնը, մեր մէջ սփռում է հայրենիքի համն ու բոյրը եւ տալիս հարազատ հայրենիքի մէջ գտնուելու ջերմ զգացողութիւնը: Այս ուրախ մտածումներով ու զգացումներով մարզիկներին յորդորեց մրցադաշտ իջնել մարզական վեհ հոգով եւ ունենալ առողջ մրցակցութիւն, նաեւ նրանց մաղթեց յաջողութիւն եւ մեծ յաղթանակների նւաճում:

Ողջոյնի խօսքերի շարանում, պարսկերէն լեզուով ելոյթ ունեցաւ Իրանի Իսլ. Խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ժորժիկ Աբրահամեանը: Նա ողջունելով պարսիկ հրաւիրեալների ներկայութիւնը, շնորհաւորեց նրանց արեգակնային տարեմուտի եւ իրանական Նովրուզ տօնի կապակցութեամբ, առանձնապէս շնորհակալական խօսք ուղղեց այն պարսիկ բարեկամներին, ովքեր իրենց համագործակցութեամբ միշտ նպաստել են միութեան աշխատանքների իրագործման եւ սահուն ընթացաւ գործին: Ծարունակութեան մէջ նշելով հասարակութեան բոլոր խաւերի, ի մասնաւորի երիտասարդութեան մօտ մարզական կեանքի զարգացման կարեւորութիւնը, իր ուրախութիւնը յայտնեց, որ Իրանում եւս Սպորտի եւ երիտասարդութեան հարցերի նախարարութիւնը այդ ուղղութեամբ ծրագրեր է մշակում եւ իրականացնում: Պրն. Աբրահամեանը, առաւել քան 60 տարիների աշխույժ կեանք վարող «Արարատ» միութիւնը համարեց բացառիկ երեւոյթ եւ ուրախութեան առիթ,



պատիւ եւ ոգեւորութեան առիթ համարեց՝ «Արարատ» միութեան յարկի ներքոյ հիւրընկալելու հայրենիքի եւ իրանահայ մարզական պատիրակութիւններին եւ նրանց ներկայութեամբ ու միասնական ջանքերով մարզական փառատօն անց կացնելու կարեւոր հանգամանքը: Պրն. Միմասեանը ակնարկ կատարեց նաեւ խաղերի նկրտութեանը, որով վերաբեւոյնելու է հայոց բանակի 25-ամեայ ուղին: Նա մարզիկ-ուհիներին մաղթեց յաջողութիւն եւ մեծ յաղթանակների նւաճում: Յաջորդիւ Սպահանի Հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ՝ Ս. Սիսիան ծ. վրդ. Քեչեճեանը հանդէս եկաւ հայրական պատգամով: Հայր Սուրբը բարձր գնահատելով իրանահայ 29-րդ Գարնանային խաղերի կազմակերպումը, իր ուրախութիւնը յայտնեց՝ խաղերը Հայոց բանակի կազմաորման 25-ամեակին նվիրելու կապակցութեամբ, ինչպէս նաեւ Հայաստանի Գիւմրի քաղաքից եւ իրանահայ երեք թեմերից մարզական պատիրակութիւնների հիւրընկալութեան առիթով՝ այն համարելով փոխադարձ սիրոյ ու յարգանքի դրսեւորում, նշելով, որ հայրենիքից ժամանած մարզիկների ներկայութիւնը, մեր մէջ սփռում է հայրենիքի համն ու բոյրը եւ տալիս հարազատ հայրենիքի մէջ գտնուելու ջերմ զգացողութիւնը: Այս ուրախ մտածումներով ու զգացումներով մարզիկներին յորդորեց մրցադաշտ իջնել մարզական վեհ հոգով եւ ունենալ առողջ մրցակցութիւն, նաեւ նրանց մաղթեց յաջողութիւն եւ մեծ յաղթանակների նւաճում:

առ այն, որ այսօր 29-րդ անգամը լինելով բնութեան զարթօնքի հետ միասին իրանահայութեան մարզական կեանքը եւս առաւել աշխոյժ ընթացք է ընդունել եւ իր խօսքը աւարտեց բարեմաղթանքներով՝ ուղղած կազմակերպիչներին, մարզիկ-ուհիներին, մարզիչներին ու պատասխանատուներին:



Խաղերի բացման առիթով շնորհատրանք-ուղերձով ողջունել էին նաեւ Իրանում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան՝ Արտաշէս Թումանեանը, Թեհրանի Հայոց Թեմի առաջնորդ՝ Ս. Սեպուհի արք. Սարգսեանը եւ Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդ՝ Ս. Գրիգոր եպս. Չիֆթնեանը:



Մինչ ջահակիր խմբի մուտքը դահլիճ, հանդիսատեսը տեսանիւթի միջոցով հաղորդակից դարձաւ մարտի 17-ին կայացած՝ Ս. Ամենափրկիչ վանքի շրջափակում վեր խոյացած Հայոց ցեղասպանութեան Ս. նահատակների յիշատակը յատկացնող յուշարձանի կրակով ջահավառութեան արարողութեանը, որը ներկայութեամբ ազգային իշխանութեան ներկայացուցիչների, միու-

թեան Կենտրոնական եւ Մարզական միաւորի վարչութիւնների վառել էր Ս. Սիփան ծ. վրդ. Քէշեճեանը եւ այն օրհնելուց յետոյ յանձնել ջահակիր խմբին, ովքեր վազքով ջահը փոխադրել էին միութեան կենտրոնատեղի:



Ծրագրի ամենասպասում եւ խանդավառութեամբ լեցուն պահը ջահակիր խմբի մուտքն էր դահլիճ, որոնց միջոցով բերած խաղերի ջահով բոցավառեց իրանահայ Գարնանային 29-րդ խաղերի խորհրդանշական կրակը: Այս շրջանի խաղերի գլխաւոր ջահակիր լինելու պատիւը տրւած էր Մարմնամարզութեան մարզաճիւղում, երկրի մակարդակում եւ Հայաստանում փայլուն յաջողութիւններ արձանագրած Մանուկ եւ Մայիս Թորոսեան եղբայրներին. ջահակիր խմբին մաս էին կազմում նաեւ շնորհալի բասկետբոլիստուհիներ՝ Մանէ Յովսէփեանը եւ Մինելի Ղազարեանը: Խորհրդանշական կրակը վառելուց յետոյ՝ մարզիկների եւ իրաւարար կազմի ներկայացուցիչների՝ Գալիա Դիլանճեանի եւ Լուսինէ Ասատրեանի միջոցով կատարեց երդման կարգը:

Դահլիճում ստեղծւած յուզիչ եւ միաժամանակ խանդավառ ու ուրախութեամբ լեցուն առաւել խանդավառեցին միութեան Սկաւտական միաւորի միջոցով իրականացած ցուցական աշխատանքը եւ Մշակութային միաւորի գեղարուեստական յայտագիրը, ինչը սկսեց Հայոց բանակին նկատելով՝ Նոր Ջուղայի վերջին 10 տարիների անաւանի մարզիկ-ուհիների մասնակցութեամբ պատրաստւած Հայոց բանակի հիմնի՝ «Երագ իմ երկիր» տեսահոլովակի երգեցողութեամբ եւ շարունակւեց «Կռունկ» պարախմբերի կատարմամբ՝ «Փրեզումէշ», «Վերվերի» եւ ազգագրական պարերի շարանով: Ընթացքում երգերի կատարումներով հանդէս եկան համայնքի սիրած երգիչ՝ Կարէն Օհանեանը եւ Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախմբի մեներգչուհիներ՝ Վանա Շիրանեանը եւ Թանիա Մինասեանը, որոնց ընկերակցում էր «Անի» նագախումբը: Կատարումները ընդմիջում էին օրան համահունչ բանաստեղծական կտորների կատարումներով՝ հանդիսավարուհու միջոցով: Գեղարուեստական բաժնի ղեկավարներն էին Ռիմա Սիմոնեանը եւ Կարին Տէր Մարտիրոսեանը, պարուսույց՝ Նունէ Մկրտչեանը, «Կոմիտաս»

երգչախմբի ղեկավար՝ Արմեն Ամիրխանեանը եւ նագախմբի ղեկավար՝ Արին Խաչիկեանը: Երեկոն ամփոփեց «Մենք ենք մեր սարերը» երգի ոգեշնչող կատարումով:

Բացման հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն հրաւիրեալների ներկայութեամբ, ուր հնչեցին արտայայտութիւններ եւ մաղթանքներ:

Մարտի 19-ից-24-ը ծաւալող մրցութիւնները կայացան ֆուտբոլ, բասկետբոլ, սեղանի թենիս եւ թեթեւատլետ մարզաձեւերում:



Թւականիս մարտի 24-ի երեկոյեան, Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան մարզարահում, տեղի ունեցաւ իրանահայ Գարնանային 29-րդ խաղերի փակման հանդիսութիւնը:

Ծրագրի սկզբում հաղորդավարուհին խաղերի կազմակերպիչների անունից շնորհակալական խօսքեր ուղղեց բոլոր նրանց, որոնց համագործակցութեան շնորհիւ իր յաջող աւարտին հասաւ այս շրջանի խաղերը, յաղթող խմբերին շնորհեց վկայագրեր, մեդալներ

ու գաւաթներ եւ ֆուտբոլի ամենաշատ գոլը արձանագրած մարզիկները պարգեւատրուեցին «Ոսկեայ կօշիկ» յատուկ մրցանակով: Մրցանակները յանձնեցին Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ՝ Տ. Սիփան ծ. վրդ Քէչէճեանը, միութեան արտօնատէրեր՝ Թաթուլ Օհանեանը եւ Ալլին Մելիքեանը, Կենտրոնական եւ Մարզական միաւորի վարչութիւնների անդամները, խաղերի աշխատանքները համակարգող եւ Ֆուտբոլի յանձնախմբերի ներկայացուցիչները:

Մեդալաբախշման աւարտին՝ հոծ բազմութեան խրախուսանքների ներքոյ պայքարեցին եզրափակիչ փուլ անցած Հ.Մ.Ա.Կ.-ի եւ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան տղայոց երեք բասկետբոլի խմբերը. արդիւնքում 60-57 հաշուով մրցադաշտից յաղթող դուրս եկաւ հիւրընկալ միութեան թիմը:



Նշելի է, որ հինգօրեայ մարզական փառատօնը իրականացւեց Նոր Զուղայի Հայ մարզա-մշակութային «Արարատ» միութեան Կենտրոնական վարչութեան նախաձեռնութեամբ եւ համագործակցութեամբ կազմակերպիչ յանձնախմբի, միութեան Երեւցների, Մշակութային, Մարզական, Սկստուական եւ Ուսանողական միաւորների, Կարգապահական կազմի, Ֆուտբոլի յանձնախմբի ու անհատ-միութեանականների անշահախնդիր համագործակցութեամբ:

ԻՐԱՆԱՀԱՅ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ 29-ՐԴ ԽԱՂԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ՝ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՄՐՑՈՅԹ ՄԱՐԶԻԿ-ՈՒՇԻՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ

Իրանահայ Գարնանային 29-րդ խաղերի շրջանակում, չորեքշաբթի՝ մարտի 22-ի երեկոյեան, միութեան բացօթեայ նորակառոյց բեմում կայացաւ գիտելիքների մրցոյթ՝ մասնակցութեամբ խաղերին մասնակից միութիւնների ու կազմակերպութիւնների մարզական խմբերի երեքական ներկայացուցիչների: Մրցութեան կազմակերպիչը Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Ուսանողական միաւորն էր: Մրցութիւնը գեղեցկօրէն վարեց Վանա Ծիրանեանը: Հետաքրքիր եւ խանդավառ

ընթացք ընդունած միջոցառման աւարտին, ամփոփելով վաստակած միաւորները, առաջին, երկրորդ եւ երրորդ տեղերը գրուեցին՝ Թաւրիզը, ՀՄԱԿ-ը եւ Գիւմրին: Առաջին տեղը զբաղեցրած Թաւրիզի խմբի անդամները պարգեւատրուեցին յուշանւէրներով, իսկ բոլոր մասնակիցներին յանձնուեցին գնահատագրեր:



ՀԱՅ ՄԱՅՐԵՐԻ ՕՐԻԱՆ ՆԻՒՐԻԱԾ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ՝ Ն. Զ. ՀԱՅ Մ. Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՍԿԱՌՏԱԿԱՆ ՄԻԱԽՈՐԻ ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹԵԱՐ

Թուականիս ապրիլի 7-ի առաւօտեան, Նոր Զուղայի Հայ մարզա-մշակութային «Արարատ» միութեան Սկաւտական միաւորի շէնքի բակում ճշւեց Հայ մայրերի օրը: Տօնական հանդիսութեան նախաձեռնողը եւ կազմակերպողը միաւորի Գերագոյն մարմինն էր, որին հրաւիրած ու ներկայ էին՝ իրենց անդամ-ուհիների մայրերը, Կենտրոնական վարչութեան եւ միաւորների վարչութիւններին անդամակցող մայրիկները:

որի վարչութեան անդամ Անահիտ Սարինդեանը արտայայտեցին շնորհաւորանքի եւ բարեմաղթանքի խօսքերով:



Ներկայներին ողջունեց եւ օրւայ առթիւ շնորհաւորեց միութեան Կենտրոնական վարչութեան անդամ եւ միաւորի կապ՝ Մանիա Ղուկասեանը, այնուհետեւ Կենտրոնական վարչութեան անունից Լորեթա Դաւթեանը, Սկաւտական միաւորի Ծնողական խորհրդի անունից Նոռա Շահիջանեանը, Մշակութային միաւորի նախագահուհի Քարմէն Ղեւեանը, Երէցների միաւորի նախագահուհի Վարդուշ Զարգարեանը եւ Մարզական միա-

Յերեկոյթն առաւել աշխույժ ընթացք ընդունեց Վարդուշ Զարգարեանի եւ Ալլենուշ Մարտոյեանի երգերի կատարմամբ: Ընդունելութեան աւարտին միաւորի Գերագոյն մարմինը յուշանւէրներով պարգեւատրեց միաւորի աշխատանքներին աջակցող՝ Սոնիա Պօղոսեանին եւ Ալիդա Ասատրեանին, իսկ հանդիսութեանը ներկայ մայրերին նւիրեց շնորհաւորանքի գեղեցիկ բացիկներ:

Յատկանշելի է, որ միաւորի շէնքի բացօթեայ տարածքում կազմակերպւած տօնակատարութիւնը մեծ ուրախութիւն եւ բացառիկ տպաւորութիւն թողեց հրաւիրեալների մօտ, ինչը արտացոլւեց նրանց ելոյթներում:

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԸ ՄԻԱՍՆԱԲԱՐ ՆՇԵՑ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ



Կիրակի՝ ապրիլի 16-ի երեկոյեան, Նոր Զուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան կենտրոնատեղիում ճշւեց Սուրբ Յարութեան տօնը:



Հակթախաղ տօնահանդէսի տեսքով իրականացւած հանդիսութեան կազմակերպողը նոյն միութեան Երէցների միաւորն էր: Միաւորը բացի ընդունւած ուստեսների մատուցումից, վաճառքի էր հանել նաեւ գաթա, ներկած հաւկիթ եւ ձուով պատրաստած խորտիկներ, ինչպէս նաեւ կազմակերպել էր քանի խաղեր եւ պատրաստել զատկական խորհրդանիշերով զարդարւած տաղաւար՝ ուր ներկայները հնարաւորութիւն ունեցան լուսանկարելով յաւերժացնել իրենց տօնական բարձր տրամադրութիւնը:

Եւ այսպիսով բազմահարիւր ներկայները միասնաբար ճշւեցին Սուրբ Յարութեան տօնը: Երեկոն իրականացւեց Միաւորի ամբողջ անձնակազմի համագործակցութեամբ:

ԻՐԱՆԱԿԱՆ ՆՈՌՈՒՋ-Ի ԱՐՉԱԿՈՒՐԴՆԵՐԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆԹԻ ՑՈՒՑԱՐԱՀՈՒՄ ԿԱՅԱՑԱԻ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԳԹՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՄԵԱՅ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՉԵՌԱՐԻԵՍԻ ՑՈՒՑԱՀԱՆՂԵՍ-ՎԱՃԱՌՔԸ



Նոր Զուղայի Հայ Կանանց Գթութեան միութիւնը ելնելով իր բարեսիրական նպատակներից, 1954 թականից ի վեր, իրանական Նոռուգ-ի (Նոր տարի) արձակուրդների ընթացքում, Ս. Ամենափրկչեան վանքի շրջափակում կազմակերպում է ձեռարւեստի ցուցահանդէս-վաճառք:

Գարնանային այս ծրագիրը լայն հնարաւորութիւն է տալիս ձեռներեց հայ կանանց՝ իրենց աշխատանքը ներկայացնելու եւ վաճառելու, իսկ Ս. Ամենափրկչեան վանք այցելող զբօսաշրջիկներին առիթ է ընձեռում առաւել ծանօթանալու հայկական մշակութիւն՝ ի մասնաւորի ձեռարւեստին: Ցուցահանդէսի ամբողջական հասոյթը Հայ կանանց գթութեան միութեան միջոցով ծառայեցում է բարեսիրական ու հայրենասիրական նպատակներով ծրագրերին:

Այս տարի ամենամեայ ցուցահանդէս-վաճառքի

բացման արարողութիւնը կատարեց մարտի 19-ի առաւօտեան ժամը 9:30-ին՝ ձեռամբ Սպահանի հայոց թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի եւ ներկայութեամբ միութեան անդամուհիների ու ժողովրդի: Միջոցառման շրջագծում ներկայացել էին բարձրաճաշակ ձեռքի աշխատանքներ, ինչպիսին են՝ զանազան ոճի գործածքներ, զարդեղէններ, հագուստներ, տիկնիկներ ու հայկական աւանդական հրուշակներ:



Ցուցահանդէսի կրպակների դասաւորման եւ իրերի վաճառման պարտականութիւնը ինչպէս միշտ սիրայօժար կերպով կատարեցին Ն.Ջ. Հայ Կանանց Գթութեան միութեան անդամուհիները:

ԱՐԵՒԱԳԱԼԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳ. ԾԵՐԱՆՈՑՈՒՄ

Նոր Զուղայի հայոց ազգ. ծերանոցը ղեկավարող Հայ Կանանց Գթութեան միութիւնը, սոյն կենտրոնի տարեց բնակիչներին հոգեւոր սնունդ մատակարարելու նպատակով՝ թեմիս հոգեւորականաց դասի հետ համագործակցաբար, ծերանոցի յարկի ներքոյ իրականացնում է զանազան ժամերգութիւններ՝ եկեղեցական տարբեր տօների ու արարողութիւնների շրջագծում:



Այս ծիրում, երեքշաբթի՝ մարտի 21-ի առաւօտեան ժամը 9:30-ին, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի եւ մասնակցութեամբ՝ Ծահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերայ. Տ. Անանիա ծ.

վրդ. Գունանեանի, քահանայից ու դպրաց դասերի ներկայացուցիչների եւ Կանանց հոգեւոր լսարանի ու «Շուշանիկ» երգչախմբի անդամուհիների տեղի ունեցաւ Արեւագալի հոգեպարար արարողութիւնը: Կարգին ներկայ էին ծերանոցի բնակիչներն ու աշխատակազմը, ինչու չէ նաեւ Հայ Կանանց Գթութեան միութեան վարչութեան ներկայացուցիչները:



Արարողութեան աւարտին գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանն իր հայրական օրհնանքը փոխանցեց ներկաներին: Նա իր ելոյթի սկզբնական բաժնում բարեբախտութիւն համարելով այն փաստը, որ Մայրերի տօնի նախաշեմին ծերանոց կատարած իր այս այցով մի

անգամ եւս առիթ ունեցաւ հանդիպելու սոյն հաստատութեան յարկի ներքոյ բնակող մայրերին, կարեւորութեամբ շեշտեց՝ հայ մայրերը ոչ միայն իրենց սեփական ընտանիքների, այլեւ ամբողջ ազգի մայրերն են: Այնուհետեւ Հայր Սուրբը նշելով, որ ցանկացած օջախ աղօթքով վերածուում է փոքրիկ եկեղեցու, ընդգծեց, թէ քիչ առաջ մատուցած ժամերգութիւնը յաւելեալ Աստուածային օրհնութիւն եւ շնորք կը պարգեւի բոլորիս՝ մեր մայրիկների մասնակցութեան շնորհիւ: Կաթողիկոսական փոխանորդը դրատանքի խօսք ուղղեց ծերանոցը ղեկավարող միութեան անդամուհիներին՝ տա-

րեց բնակիչների նկատմամբ ցուցաբերած հոգածութեան համար:

Աւարտին տեղի ունեցաւ ընդունելութիւն՝ ջերմ եւ մտերմիկ մթնոլորտի ներքոյ, ուր հնչեցին երգեր, իսկ ողջունի խօսքերով ու բարեմաղթանքներով արտայայտեցին գերայ. Տ. Անանիա ծ. վրդ. Գունանեանը, արժ. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանն ու «Շուշանիկ» հոգեւոր երգչախմբի ղեկավար Անուշ Յովհաննիսեանը: Վերջում ժամերգութեան եւ այցի իրականացման համար շնորհակալական խօսքով հանդէս եկաւ Ն.Ջ. Հայ Կանանց Գթութեան միութեան վարչութեան նախագահուհի Արմինէ Սիմոնեանը:

**ՄԱՅՐԵՐԻ ՏՕՆԻ ԱՌԹԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝
ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԳԹՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՐԿԻ ՏԱԿ**

Մայրութեան եւ գեղեցկութեան տօնի առթիւ, Նոր Զուղայի հայ Կանանց Գթութեան միութեան վարչութեան նախաձեռնութեամբ եւ Զեռնարկային յանձնախմբի կազմակերպութեամբ, չորեքշաբթի՝ ապրիլի 12-ի երեկոյեան, սոյն միութեան կենտրոնատեղիում, որը գտնուում է հայոց ազգ. ծերանոցի տարածքում, պատկան անդամուհիների ներկայութեամբ իրականացւեց տօնական միջոցառում:

թեման՝ անդրադառնալով ընտանիքից դուրս կանանց աշխատանքին ու գործունէութեանը խոչընդոտող հանգամանքներին ու ընտանիքում նրանց դերակատարութեանը: Վերջում տկն. Դիլանչեանը եզրափակելով արծարծւած մտքերը եւ յատկապէս առկայ դժարութիւնների փարատման ուղղութեամբ հնչած առաջարկերը՝ ընդգծեց՝ կին-տղամարդ հաւասարութեանը ձգտման, երեխաների դաստիարակութեան գործում հայրերի դերակատարութեան բարձրացման եւ նմանատիպ թեմաներով լսարանների կազմակերմման անհրաժեշտութիւնը:



Սկզբում միութեան վարչութեան նախագահուհի Արմինէ Սիմոնեանը շնորհաւորելով առիթի կապակցութեամբ՝ ներկաներին հրաւիրեց մէկ րոպէ յտոնկայս լուծութեամբ յարգել Արցախի ապրիլեան քառօրեայ պատերազմի նահատակների յիշատակը, որից յետոյ հրաւիրեց վաստակաւոր ուսուցչուհի Քառուղիի Դիլանչեանին օրւայ առթիւ արտայայտելու:

Ծրագրի երկրորդ բաժնում իրկանացւեցին ընդունելութիւն եւ մտերմիկ մթնոլորտի ներքոյ ուրախ ժամանց, ապա վարչութեան կողմից անդամուհիներին նւիրւեցին յուշանւերներ:

Բանախօսն եւս իր հերթին շնորհաւորելով տօնի առթիւ՝ իր խօսքը ծաւալեց «Վերջին ժամանակաշրջանում հայ կնոջ դերը ընտանիքում եւ հասարակութեան մէջ» թեմայի շուրջ: Նա մի շարք թւային տուեալների միջոցով ներկայացրեց թեմիս ազգային կեանքում կանանց դերակատարութեան պատկերը, ապա բոլորին հրաւիրեց իրենց անձնական տեսակէտներն արտայայտել այս ուղղութեամբ:



Հարկ է նշել, որ Կանանց Գթութեան միութեան վարչութիւնը ուրբաթ՝ ապրիլի 7-ի առաւօտեան ծերանոցում բնակող մայրիկների համար նույնպէս կազմակերպել էր մեծրաման միջոցառում:

Այնուհետեւ անդամուհիները բուռն քննարկեցին

ԵՐԿՕՐԵԱՅ ՑՈՒՑԱՀԱՆԳԵՍ-ՎԱՃԱՌՔ՝ ՀԱՅ ՌԻՍ. ՉՀԱՐՄԱՀԱԼ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՄԱՍՆԱՃԻՂԻ ՆԱՍՆԱՉԵՆՈՒԹԵԱՐ

Հայ ռու. Չհարմահալ միության Նոր Զուղայի մասնաճյուղի նախաձեռնությամբ, հինգշաբթի եւ ուրբաթ՝ մարտի 2-ին եւ 3-ին, սոյն մասնաճյուղի կենտրոնատեղիի դահլիճում իրականացւեց գարնանային ցուցահանդէս-վաճառք՝ առիթ ընձեռելով Նոր Զուղայի եւ Ծափինշահրի հայ համայնքների ձեռներեց կանանց վաճառքի հանելու իրենց պատրաստած թխածքները,



ձեռքի աշխատանքները, տօնական զարդերը, մրգանուշը, թթեղէնը եւ մի շարք այլ իրեր: Վաճառքի բաժնում յատուկ կրպակ էին զբաղեցրել նաեւ կազմակերպիչ միութիւնն ու Նոր Զուղայի Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը՝ ցուցադրելով իրենց շնորհաշատ անդամուհիների ձեռքի պատրաստածը:

Երկօրեայ աշխատանքի ընթացքում բազմաթիւ հայ եւ պարսիկ հայրենակիցներ այցելեցին սոյն ցուցահանդէս-վաճառքի կենտրոն. պարսիկ հայրենակիցները յատկապէս առիթ ունեցան մօտիկից ծանօթանալու հայկական ձեռարեստին ու մշակոյթին:



Վաճառքին զուգահեռ աշխատեց նախատեսւած բիւֆէէ՝ այցելուներին մատուցելով համեղ ուտելիքներ ու ըմպելիքներ:

Ծրագրի կազմակերպման գործում մասնաճյուղի վարչութեան հետ համագործակցել էին նոյն միութեան Զեռնարկային յանձնախումբն ու Գրական միաւորը:

ՄԻՋԻՆՔԻ ԱՌԹԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Չորեքշաբթի՝ 2017 թականի մարտի 22-ի առաւօտեան, Ծափինշահրի «Սրբոց Վարդանանց» եկեղեցու սրահում տեղի ունեցաւ Արեւագալի արարողութիւն՝ Սպահանի հայոց թեմի Կաթողիկոսական փոխանորդ Տ. Սիփան ծ. վրդ. Քէշէճեանի ձեռամբ եւ ներկայութեամբ համայնքիս հոգեւոր տեսուչ Տ. Անանիա ծ. վրդ. Գուճանեանի, Տ. Սահակ քինյ. Մինասեանի եւ դպրաց դասի: Օրւայ արարողութեանը մասնակցել էին նաեւ համայնքի ազգային մարմինների եւ միութիւնների ներկայացուցիչները եւ անդամները:



Արեւագալի արարողութիւնից յետոյ, Ծափինշահրի «Հայ կանանց եկեղեցասիրաց» միութեան նախաձեռնությամբ «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում տեղի ունեցաւ գեղեցիկ միջոցառում Միջինքի առիթով, որին ներկայ էին համայնքի ազգայինները, միութեանականները եւ հաւատացեալ հայորդիները:

Բարիգալստեան խօսքով հանդէս եկաւ կազմակերպիչ Միութեան նախագահ տկն. Լինա Մովսիսեանը, ով գեղեցկօրէն ներկայացրեց Միջինքի խորհուրդը եւ դրա հետ կապած գեղեցիկ ասանդոյթները:

Այնուհետեւ օրւայ առիթով իրենց գեղեցիկ երգերով ելոյթ ունեցան տկն. Մագի Յարութիւնեանը եւ պրն. Արմոնդ Հախնազարեանը:

Հոգեհարազատ մթնոլորտում, բոլոր ներկաները հիրապիրեցին կազմակերպիչ միութեան կողմից պատրաստուած Փերիոյ գաւառի մախոխով եւ ոսպապուրով, որի ընթացքում նաեւ Միջինքի բախտախաղի կարկանդակ բաժանեց ներկաներին:



Ծրագրի աւարտին իր հայրական պատգամով արտայայտեց Տ. Սիփան ծ. վրդ. Քէշէճեանը, ով շնորհաւորելով Միջինքը՝ իր ուրախութիւնը յայտնեց այս տօնը Ծափինշահրի հայ համայնքի անդամների հետ նշելու առիթով եւ իր ներկայութիւնը բնութագրեց որպէս այս

համայնքի հանդէպ իր ունեցած սիրոյ եւ յարգանքի արտայայտութիւն: Գերապատիւ Հայր Սուրբն իր իւրայատուկ եւ շնորհակալական խօսքն ուղղելով համայնքի հոգեւոր տեսուչին, քինյ. հօրը, սարկաւազին եւ դպրաց դասին՝ գնահատեց նաեւ համայնքի ազգայինների եւ միութենականների ներկայութիւնը այս տօնին: Հայր Սուրբը քաջալերեց եւ բարձր գնահատեց Ծահինշահրի

«Հայ կանանց եկեղեցասիրաց» միութեան վարչութեանը, ում նախաձեռնութեան շնորհիւ կազմակերպուել էր այդ գեղեցիկ սիրոյ սեղանը:

Իր խօսքի աւարտին գերպ. Հայր Սուրբը շնորհաւորեց բոլորի գարունը եւ մաղթեց բոլորին քաջաողջութիւն եւ յաջողութիւն՝ յանձնարարելով ներկաներին իր աղօթքներն ու օրհնութիւնը փոխանցել նաեւ համայնքի միւս անդամներին:

ՀԱՅ ՄԱՅՐԵՐԻ ՄԵԾԱՐՈՒՄ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Հինգշաբթի՝ 2017 թականի ապրիլի 6-ի առաւօտեան Ծահինշահրի «Հայ կանանց եկեղեցասիրաց» միութեան վարչութեան նախաձեռնութեամբ՝ «Սրբոց Վարդանանց» դպրոցի շրջափակում նշեց Մայրերի տօնը՝ ներկայութեամբ արժն. Տ. Սահակ քինյ. Մինասեանի:

Բարիգալստեան խօսքով հանդէս եկաւ միութեան ատենապետ Լինա Մովսիսեանը, ով շնորհաւորելով հայ մայրերին՝ բարձր գնահատեց նրանց յանձնառու, ողջամիտ ու ազգանկէր նկարագիրը՝ ցանկանալով հայ մայրերին քաջաողջութիւն եւ երջանկութիւն:



Ծրագիրը շարունակեց գեղարեստական յայտագրով միութեան բազմավաստակ անդամուհի Անահիտ Օհանեանի ղեկավարութեամբ:

Տկն. Օհանեանը գեղեցիկ մէջբերումներ կատարելով հայ մօրն ուղղած՝ Ծահինշահրի հոգեւոր տեսուչ Տ.

Անանիա ծ. վրդ. Գունանեանի արտայայտութիւններին՝ ներկաներին հրաւիրեց վայելելու կազմակերպած գեղարեստական ծրագիրը, որի ընթացքում իրենց գեղեցիկ երգերով ու ասմունքներով ելոյթ ունեցան միութեան անդամուհիներ Նարդ Փանոսեանը, Վարդուշ Հախնազարեանը, Էլիզ Ծահիջանեանը, Շողիկ Քեշիշեանը, Կարինէ Աէթաղայեանը, Արմիկ Թորոսեանը, Սոնիկ Յակոբեանը, Նարմիկ Դեհբաշեանը եւ Հերմինէ Մանուկեանը:

Տեղի ունեցան նաեւ հետաքրքիր մրցութիւններ, որին մեծ խանդավառութեամբ մասնակցեցին ներկաները:

Յաջորդիւ օրայ առիթով իր շնորհաւորանքի խօսքով ու բարեմաղթանքներով արտայայտուեց արժանապատիւ քինյ. հայրը, ով դրատելով հարազատ ընտանիքի ու ազգի հանդէպ ցուցաբերած հայ մօր բուռն նւիրածութիւնն ու յանձնառութիւնը՝ օրհնեց հայ մայրերին եւ մաղթեց նրանց բարի մայրութիւն եւ արեւշատութիւն:

Արժ. քինյ. հօր ձեռամբ, միութեան վարչութեան կողմից իբրեւ յուշանկէր՝ Տիրամօր գեղեցիկ սրբապատկերներ նւիրեցին գերպ. Հայր Սուրբին, արժն. Տէր Հօրը եւ միութեան անդամներին:

Օրայ առիթով նախատեսուել էր նաեւ պատշաճ հիւրասիրութիւն, որը վայելեցին բոլոր ներկաները:

ԱՐՅԱՆԻ ՔԱՌՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶՈՀԻԱԾՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Սպահանի Հայոց Թեմի Կրօնական խորհրդի նախաձեռնութեամբ, շաբաթ՝ 2017 թականի Ապրիլի 8-ի երեկոյեան ժամը 6:00-ին, Ծահինշահրի «Սրբոց Վարդանանց» եկեղեցում, Կիրակնամուտի ժամերգութեան աւարտին, համայնքիս հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գունանեանի ձեռամբ եւ մասնակցութեամբ արժն. Տ. Սահակ քինյ. Մինասեանի եւ դպրաց դասի կատարեց հոգեհանգստեան պաշտօն՝ Արցախի քառօրեայ պատերազմի տարելիցի առիթով, զոհուածների յիշատակին:

Արարողութեանը ներկայ էին Հայ Համայնքի Վար-

չութիւնը, միութիւնների ներկայացուցիչներն ու համայնքի անդամները:



Արարողութեան աւարտին իր սրտի խօսքը փոխանցեց գերպ. Տ. Անանիա ծ. վրդ. Գունանեանը, ով փառաւորելով նահատակների սուրբ յիշատակը՝ ընդգծեց, որ ողջերը իրենց զէնքով, իրենց պայքարով են սարսափելի, իսկ ընկածները իրենց վրէժով ու անմոռաց յիշա-



տակով: Գերպ. Հայր Սուրբը մեծարեց նահատակ անմահ մարտիկների սուրբ յիշատակը, ովքեր թողեցին իրենց հարազատ ընտանիքը, իրենց գործը, իրենց աշ-

խատանքը՝ գնացին Խաչի յետելից եւ իրենց նահատակութեամբ անմահացան եւ դրա համար ընկածները աւելի սարսափելի են իրենց յուշերով ու մանաւանդ վրէժով:

Գերպ. Հայր Սուրբն աղօթեց զոհւածների հոգիների խաղաղութեան համար, նրանց մայրերի, ընտանիքների, երեխաների մխիթարութեան համար: Նաեւ օրհնելով բոլորին այսպէս շարունակեց իր աղօթքը. «Թող Աստուած մեր երիտասարդների մէջ զարգացնի գաղափարի լոյսը, եւ Աստծու զօրութեամբ ծլարձակի հողի, հայրենիքի հանդէպ սէրը: Եւ թող նոր մայրեր ծնեն նոր մարտիկներ, նոր կամքեր, նոր Արցախներ, նոր արցախցիներ, նոր Արցախը պահողներ, նոր Հայաստան կերտողներ եւ մանաւանդ նոր հայ ազգը եւ հայ ազգի անունը բարձրացողներ: Թող իրենց հոգուն լոյս իջնի, թող նրանց յիշատակը անմար մնայ եւ թող ընկածների յիշատակը մեզ նոր պայքարի, նոր վրէժի եւ նոր մարտունակութեան մղի»:

Վերջում բոլորը միասնաբար աղօթեցին Տէրունական աղօթքը եւ խնկարկեցին զոհւածների անմահ յիշատակին:

ՇԱՏԻՆՇԱՏՐՈՒՄ ԾԱՂԿԱԶԱՐԴ, ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԴՈՆԲԱՅԵՐ

Կիրակի՝ 2017 թականի ապրիլի 9-ի առաւօտեան, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» եկեղեցում, Հայաստանեայց առաքելական Ս. Եկեղեցու գեղեցիկ տաղարներից մէկի՝ Ծաղկազարդի առիթով տեղի ունեցաւ Ս. Եւ անմահ Պատարագ՝ նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ Տ. Սիփան ծ. վրդ. Քէշէճեանի եւ մասնակցութեամբ Տ. Սահակ քհնյ. Մինասեանի եւ դպրաց դասի:

Ս. Պատարագին ներկայ էին Հայ Համայնքի Վարչութեան ներկայացուցիչները, հայոց դպրոցների ուսուցիչները՝ աշակերտ-ուհիներով հանդերձ ու մեծ թւով հաւատացեալներ:



Յընթացս Ս. Պատարագի Գերպ. Հայր Սուրբը գեղեցկօրէն ներկայացրեց Քրիստոսի հանդիսաւոր եւ յաղթական մուտքը Երուսաղէմ եւ բովանդակալից քարոզով օրւայ խորհուրդը փոխանցեց ներկաներին: Այնուհետեւ օրհնեց արարողութեանը մասնակցող մանուկներին եւ աշակերտ-ուհիներին, ովքեր ուշադիր եւ մեծ հետաքրքրութեամբ հետեւում էին արարողութեանը:

Իր քարոզի աւարտին, գերպ. Հայր Սուրբը շնորհաւորեց Ծաղկազարդ տօնի կապակցութեամբ եւ աղօթեց, որպէսզի բոլորի կեանքում յաւերժ ներկայութիւն լինի Քրիստոսը:

Յաւարտ Ս. Պատարագի, Շահինշահրի «Հայ կանանց եկեղեցասիրաց» միութեան անդամուհիների միջոցով զարդարած ձիթենու ճիւղերն օրհնեցին գերպ. Հայր Սուրբի միջոցով եւ բաժանեցին ներկայ հաւատացեալների միջեւ՝ որպէս ուրախութեան, փրկութեան եւ նոր կեանքի խորհրդանիշ:

Կիրակի երեկոյեան, հաւատացեալների ներկայութեամբ տեղի ունեցաւ Դոնբացէքի խորհրդաւոր արարողութիւնը, որի ընթացքում արժ. քհնյ. հայրն երգեց «Բա՛ց մեզ, Տէ՛ր» շարականը եւ ըստ տեղական սովորոյթի, խորհուրդ արած կանանց միջոցով բացեց Ս. Խորանի վարագոյրը:



ՄԱՅՐԵՐԻ ՏՕՆԸ ԾԱՖԻՆՇԱՐԻ ՄԱՆԿԱԴԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿԹԱՐԱՆՈՒՄ



Հայ մայրերի տօնի առթիւ, նախաձեռնութեամբ Ծափինշարի հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ ծնողական խորհրդի, երկուշաբթի՝ 2017 թականի, ապրիլի 10-ի առաւօտեան կազմակերպուել էր մեծարանքի միջոցառում՝

անունն ու բարի համբար: Բացման խօսքին յաջորդեց մայրերին նկիրած՝ աշակերտների խանդավառ երգերն ու ասմունքները, որոնք քաղցր պահեր պարգեւեցին սիրելի մայրերին:

Այդ օրը սաները մեծ հրճանքով, իրենց մայրերին նկիրեցին ուսուցիչների օգնութեամբ իրենց ձեռամբ պատրաստած գունագեղ ծաղիկները:

Այնուհետեւ բոլորը յագեցած օճանական տրամադրութեամբ՝ մեկնեցին քաղաքի «Վանանց այգին», որտեղ նաեւ վայելեցին յիշարժան պահեր:

Օրւայ առիթով կազմակերպուել էր համեստ հիւրասիրութիւն:

նոյն դպրոցի աշակերտութեան ծնողների ներկայութեամբ:

Ողջույնի գեղեցիկ խօսքով հանդէս եկաւ դպրոցի տեսչուհի օրդ. Վարինէ Մինասքանեանը, ով շնորհաւորանքի խօսք ուղղելով մայրերին՝ մաղթեց նրանց բարի մայրութիւն, մայրական բերկրանք ու երջանկութիւն: Յարգելի տեսչուհին իր խօսքում նաեւ բարձր գնահատելով հայրենի բանակում, բուն նկիրածութեամբ ու ամենայն յանձնառութեամբ ծառայող իգական սեռի ներկայացուցիչներին՝ փառաւորեց նրանց բարձր

ԱԽԱԳ ԾԱՐԱԹԸ ԵՒ Ս. ԶԱՏԻԿԸ՝ ԾԱՖԻՆՇԱՐՈՒՄ

Աւագ Երեքշաբթի՝ 2017 թականի ապրիլի 11-ի երեկոյեան ժամը 6-ին, Ծափինշարի «Սրբոց Վարդանանց» եկեղեցու սրահում տեղի ունեցաւ ժամերգութիւն՝ արժն. Տ. Սահակ քինյ. Մինասեանի կատարմամբ եւ դպրաց դասի մասնակցութեամբ:

քինյ. Մինասեանի ձեռամբ, տեղի ունեցաւ հաւաքական խոստովանանք եւ ներկաներն ստացան Ս. Հաղորդութիւն:

Նոյն օրւայ երեկոյեան՝ համայնքի հոգեւոր տեսուչ գերայ. Տ. Անանիա ծ. վրդ. Գունանեանի նախագահութեամբ, Տ. Սահակ քինյ. Մինասեանի եւ դպրաց դասի մասնակցութեամբ կատարեց Ոտնւլայի հանդիսաւոր արարողութիւնը: Այս տարի Ոտնւլայի արարողութեանը մասնակից դարձան համայնքի պատանիներն ու երիտասարդները:

Գերայ. Հայր Սուրբն իր քարոզում անդրադառնալով աւետարանական պատմութեանը եւ խոնարհութեան խորհրդին, իրար սիրելը, եղբայրաբար յարգելը եւ հեգ ու խոնարհ նկարագիր ունենալը, իրաքանչիւր քրիստոնեայի պարտականութիւն համարեց եւ յորդորեց բոլորին՝ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հաւատարիմ հետեւորդները լինել:



Աւետարանից հատուածներ ընթերցելուց յետոյ, Յիսուսի պատմած «Տասը կոյսերի առակ»-ի ներկայացումը իրագործեցին եկեղեցական շապիկ հագած տասն աղջիկներ, ովքեր ներկայացրեցին հինգ իմաստուն եւ հինգ չիմար կոյսերին: Արարողութեան աւարտին արժն. քինյ. հայրը գեղեցկօրէն բացատրեց առակի իմաստը: Նա շեշտելով յափտենական կեանքին արժանանալու համար բարեգործութեամբ եւ առաքինի կեանք վարելու անհրաժեշտութիւնը, Աստուծոց խնդրեց, որ յատկապէս արարողութեանը մասնակից դարձած բոլոր աղջնակներին իմաստութիւն պարգեւի եւ գնահատեց նրանց ներկայութիւնը եւ մասնակցութիւնը օրւայ խորհրդին:

Ապրիլի 13-ին՝ Աւագ Հինգշաբթի օրը, առաւօտեան Ս. եւ անմահ Պատարագ մատուցեց արժն. Տ. Սահակ



Արարողութեան աւարտին, օրհնուած իւղը, Ծափինշարի «Հայ կանանց եկեղեցասիրաց» միութեան անդամների միջոցով բաժանեց հաւատացեալների միջեւ:

Ոտնւլայի կարգին յաջորդեց Խաարման երկարածամ կարգը, որի ընթացքում Հայր Սուրբի միջոցով ընթերցեցին աւետարանական եօթը ընթերցումները՝

Քրիստոսի մատնութեան, չարչարանքի եւ խաչելութեան վերաբերեալ: Դպրաց դասի միջոցով երգելոցին հիասքանչ եւ խորիմաստ շարականներ ու երգեր:

Արարողութեան ընթացքում, «Փառք ի բարձունս»-ից յետոյ, եկեղեցու լոյսերը մարած՝ մթութեան մէջ հնչեց յուզիչ ու հոգեզմայլ «Ո՞ր ես, մայր իմ» երգը եւ գերայ. Հայր Սուրբն օրւան պատշաճ իր խօսքը փոխանցեց ներկաներին:



Ապրիլի 15-ի երեկոյեան, Աւագ Ծաբաթ օրը, Ս. Զատիկի ճրագալոյցին մատուցեց Ս. Պատարագ, որի ընթացքում տեղի ունեցաւ հաւաքական խոստովանանք եւ հաւատացեալներն ստացան Ս. Հաղորդութիւն: Այսպիսով իր աւարտին հասաւ Մեծ Պահքի ժամանակաշրջանը եւ հնչած «Այսօր յարեաւ ի մեռելոց» շարականի բառերով Քրիստոսի Յարութեան աւետիսը փոխանցեց բոլորին:

Կիրակի՝ ապրիլի 16-ին, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Հրաշափառ Յարութեան տօնի՝ Ս. Զատիկի առթիւ հանդիսաւոր Ս. եւ անմահ Պատարագ մատուցեց գերայ. Տ. Աննիա ծ. վրդ. Գունանեանի ձեռամբ, ում սպասարկում էր արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանը:

Օրւայ արարողութեանը ներկայ էին Ծափնշահրի Հայ Համայնքի Վարչութեան, անձնակազմերի ու միութիւնների անդամներն ու բազում հաւատացեալներ:

Տեղի ունեցաւ հաւաքական խոստովանանք եւ հաւատացեալներն ստացան Ս. Հաղորդութիւն:

Խնկաբոյր եւ հոգեպարար արարողութեան ընթացքում, իր պատգամը փոխանցեց գերայ. Հայր Սուրբը, ով Սպահանի հայոց թեմի անունից շնորհաւորեց Քրիստոսի հրաշափառ Յարութիւնը:

Նա անդրադառնալով Քրիստոսի Յարութեան դրագին յայտնեց. «Քրիստոսի Յարութիւնն սկսեց այն րոպէին, երբ Քրիստոսն աշխարհ եկաւ եւ մանաւանդ այն րոպէին, երբ Յովհաննէս Մկրտչի առաջ ծունկի գալով մկրտեց եւ երկինքը բացեց ու մի ձայն լսեց, որ ասում էր. «Ահաասիկ այս է Իմ սիրելի որդին. Նրան լսեցէք»: Ահաասիկ այս է Քրիստոսի Յարութեան սկիզբը, որովհետեւ Քրիստոսը միայն Յարութիւն առնելով չէ՛ր, որ մեզ պիտի կեանք պարգեւէր, Քրիստոսը միայն Յարութիւն առնելով չէ՛ր, որ մեր մեղքերը պիտի փրկէր: Քրիստոսը, երբ մկրտեց եւ սկսեց իր առաքելութիւնը, դա արդէն հաւատացեալների եւ մարդկութեան փրկութեան առաջին աւետիսն էր: Իսկ մենք ինչպէ՞ս կարող ենք Յարուցեալ Քրիստոսին տեսնել: Քրիստոսը մեզ յայտնում է շատ պարզ բաներով, կարելորն այն է, որ կարողանանք մեր սրտի եւ հոգու աչքերը բացենք: Ուրեմն բոլորս միասին աղօթենք, որ Քրիստոսը մեր մէջ էլ Յարութիւն առնի»:

Հայր Սուրբն իր պատգամի աւարտին, շնորհակալութիւն յայտնեց հաւատացեալներին, որ ամբողջ Աւագ Ծաբաթւայ ընթացքում մասնակցեցին կատարող եկեղեցական արարողութիւններին եւ հաղորդակից դարձան Քրիստոսին: Նա իր երախտիքի խօսքն ուղղելով նաեւ «Նարեկ» երգչախմբին՝ Մեծ Պահքի եւ Աւագ Ծաբաթւայ եկեղեցական բոլոր արարողութիւնների երգեցողութիւնները կատարելու համար, տիրացուին եւ տէր հօրը իրենց մշտական ներկայութեան համար՝ մաղթեց նրանց կանաչ ճանապարհի եւ Քրիստոսով լուսաւորած կեանք:

ԶԱՏԿԱԿԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ



Երկուշաբթի՝ 2017 թ. ապրիլի 17-ին, Ծափնշահրի հայոց սպգային «Նարեկ» մանկապարտէզ-

նախակրթարանի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ գեղեցիկ հանդիպում էր կազմակերպել դպրոցի սաների եւ բոլոր երեխաների կողմից սիրած «Զատիկի» եւ «Նապաստակի» հետ: Երախտների սիրելի բարեկամներ «Զատիկն» ու «Նապաստակը» այցելեցին դպրոցի սաներին եւ միասին զւարճալի պահեր վայելեցին: Նրանք խանդավառութեամբ միասին պարեցին եւ բալում խաղացին: Այնուհետեւ զատկական տօնի առիթով ճաշակով գունեղ հակիթներ ներկեցին, որոնց շարեցին ծնողական խորհրդի միջոցով պատրաստած զամբիղների մէջ եւ բոլորը միասին հաճոյքով ճաշակեցին օրւայ նախաճաշը:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 102-ԱՄԵԱԿԻՆ ՆԻՐԻԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՇԱՀԻՆՇԱՏՐԻ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱԳԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

Չորեքշաբթի՝ 2017 թ. ապրիլի 19-ի առաւօտեան, Ծափինշահրի հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ կազմակերպել էր նկարչութեան աշխատանք՝ նւիրած Հայոց Ցեղասպանութեան 102-ամեակին:

Սույն աշխատանքն իրագործելու համար, դպրոցի պատասխանատուների գեղեցիկ մտայնացումով հրաւիրել էին սաների հայրերը՝ փոքրիկների հետ համագործակցելու համար, որն աւելի խորհրդաւորութիւն էր հաղորդել կատարող աշխատանքին:



Հայր ու զաակ իրար կողքի իմաստալից նկարչութիւններ նկարեցին ընդարձակ պատատի վրայ՝ իրենց պահանջատիրական ոգին արտայայտելու եւ ապրիլեան սուրբ նահատակներին ոգեկոչելու համար: Այդ օրը երեխաները իրենց նախաճաշը ճաշակեցին իրենց հոգատար հայրերի մատուցմամբ:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 102-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԾՐԱԳԻՐ ՇԱՀԻՆՇԱՏՐՈՒՄ



Ուրբաթ՝ 2017 թականի ապրիլի 21-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Ծափինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի շրջափակում, Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակին կառուցւած յուշարձան-խաչքարի առջեւ, Սպահանի հայոց թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանի նախագահութեամբ եւ Ծափինշահրի հոգետոր տեսուչ գերայ. Տ. Անանիա ծ. վրդ. Գունանեանի եւ արժ. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի մասնակցութեամբ կայացաւ Սրբոց Նահատակացն Բարեխօսական կարգը:

Օրւայ խորհրդին ներկայ էին Սպահանի հայոց թեմի ազգային իշխանութեան, ազգային մարմինների, ենթամարմինների, միութիւնների եւ անձնակազմների ներկայացուցիչները, տեղի հայոց ազգային դպրոցների աշակերտութիւնն ու հոծ թուով հայտրդիներ:



Հայ Համայնքի Վարչութեան անունից, համահաւաքը բացւած յայտարարեց հաղորդավար Վիոլետ Յարութիւնեանը:



Բացման խօսքին յաջորդեց ներկաների մէկ ընկալ լուսնկայս լութիւնը՝ Հայոց Ցեղասպանութեան Սուրբ Նահատակների անմոռաց յիշատակին:

Ազգային իշխանութեան անունից բանախօսական ելոյթ ունեցաւ թեմի Պատգամաւորական ժողովի դիւանի առեմնապետ Թաթուլ Օհանեանը, ով ներկայացրեց հայոց ջարդի,

տարագրութեան եւ կրած բարոյական, մարդկային եւ նիւթական կորուստների պատմականն ու տարագրութիւնը՝ 1892-1923 թթ.: Յարգելի բանախօսն անդրադառնալով Թուրքիոյ անցեալի եւ այժմեան փանթուրքիստական քաղաքականութեանը եւ գործունէութիւններին շեշտեց Թուրքիոյ պետութեան ազգայնամոլութեան ու հայատեաց անփոփոխ նկարագիրը:

Հայ համայնքի վարչութեան անունից օրւայ խօսքն ընթերցեց վարչութեան առեմնապետ Մելքոն Ծիրանեանը, որտեղ անդրադառնալով 1892-1923 թթ. Օսմանեան կայսրութիւնում տեղի ունեցած հայ բնակչութեան զանգւածային տեղահանութեան, տարագրման եւ բնաջնջմանը ասել էր. «Հայոց Ցեղասպանութեան գիտակցումն ու ոգեկոչումը կարեւոր է բոլորիս համար, որպէսզի նոր թափով, պաշարի նոր ուղիով քայլենք դէպի մեր ոտնահարւած իրաւունքների վերականգման եւ նահատակների սուրբ կտակի իրականացման:»

Այնուհետեւ ընթերցեցին շրջանի Հայ Դատի յանձնախմբի, Ն. Զ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Ծափինշահրի մասնաճիւղի, «Փերիոյ» կրթասիրաց, Ծափինշահրի «Հայ կանանց եկեղեցասիրաց» միութիւնների եւ «Սրբոց Վարդանանց» ու «Մասիս» դպրոցների

ուսուցչական կազմի, ծնողական խորհրդի եւ աշակերտական խօսքերը:

Յաջորդիւ ազգային-հայրենասիրական երգերի գեղեցիկ կատարումներով ելոյթ ունեցան շնորհալի երիտասարդներ Վանանդ Իսաղուլեանն ու Արուֆին Հախնազարեանը:

Այնուհետեւ տեղի ունեցաւ ծաղիկների մատուցման արարողութիւնը, որտեղ Հայոց Յեղասպանութեան սուրբ նահատակների անմահ յիշատակին իրենց յարգանքի տուրքը մատուցեցին թեմիս հոգեւորականաց դասը՝ Կաթողիկոսական փոխանորդի գլխաւորութեամբ, ազգային իշխանութեան, ազգային մարմինների, շրջանի Հայ Դատի յանձնախմբի, միութիւնների եւ հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչներն ու պատասխանատուները:

Ծաղկեմատուցի արարողութիւնից յետոյ, «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի եւ «Սրբոց Վարդանանց» դպրոցի աշակերտ-ուհիները երգուսուց Նարբէ Տէր Գրիգորեանի ղեկավարութեամբ կատարեցին

խմբերգեր եւ ծաղիկներ մատուցեցին՝ նահատակների յիշատակն ոգեկոչելու համար:

Օրւայ խորհրդի առիթով իր հայրական պատգամը փոխանցեց թեմիս կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէն եանը: Նա իր գնահատանքի խօսքն ուղղելով համահաւաքի եւ օրւայ արարողութեան կազմակերպիչներին, ծրագրի իրականացմանը օժանդակողներին, պատասխանատուներին, բոլոր մասնակիցներին եւ ներկաներին, հաւաստիացրեց, որ անշուշտ այսպիսի միահամուռ, միասնական պահանջատիրական ոգով տոգորւած է, որ պէտք է շարունակենք մեր երթը, մեր անվարան ուղին դէպի Հայկական հարցի եւ Հայ Դատի վերջնական եւ արդար լուծում:

Համահաւաքի աւարտին համայնքի անդամները ակնածանքով մօտենալով խաչքար-յուշարձանին ծաղիկներ մատուցեցին սուրբ նահատակների վատ յիշատակին:



ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ ՓԵՐԻՈՅ ԳԱՒԱՌԻ «ԼՈՒՍԱՀԱՆԳԻՍ» ՍՐԲՎԱՅՐ

Ն. Զ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Ծահինշահրի վարչութեան հովանաւորութեամբ եւ Երէցական միատրի նախաձեռնութեամբ, թաւակնիս ապրիլի 28-ին կազմակերպել էր ուխտագնացութիւն դէպի Փերիոյ գաւառի «Լուսահանգիստ» սրբավայր: Ուխտաւորներն առաւօտեան ժամը 6:00-ին ճանապարհուեցին դէպի Փերիոյ գաւառի Խոյգան գիւղ, իրենց յարգանքի տուրքը մատուցելու քրիստոնէական հաւատի ազատութեան համար 1622 թաւակնին նահատակւած Գրիգոր Արփայեցու յիշատակին:

Գիւղի բարձունքի վրայ, Գրիգոր Արփայեցու շիրմի մօտ, ուխտաւորները մասնակցեցին հոգեհանգստեան հոգեպարար արարողութեանը՝ նախագահութեամբ Թեմիս կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տէր Սիփան ծ. վրդ. Քէնէնեանի: Հաւատացեալները նորոգելով Ս. հաւատի իրենց ուխտը՝ մատուում մոմեր վառեցին, խունկ ծխեցին եւ աղօթեցին



առ բարձրեալն Աստծուն: Այնուհետեւ ճանապարհուեցին դէպի Նամակերտի ազգային հիւանդանոց, որտեղ անցկացրին իրենց հանգիստը: Խումբը հետաքրքիր եւ հանելի օր անցկացնելով, բարձր տրամադրութեամբ երեկոյեան ժամը 9-ին վերադարձաւ Ծահինշահր:

Սեպուրի վարդապետան, Մարտունի Խաչիկեան, Մելինէ Հայրապետեան, Նարինէ Հայրապետեան, Համասիւտ Մարգարեան, Նվարդ Վարդապետան՝ Սերժիկ եւ Եսայի Վարդապետանների յիշատակին, Թէլօ Սահակեան՝ Սարգիս Սահակեանի յիշատակին, Մենուա Մարկոսեան, Այիդա Թորոսեան, Սիրվարդ Աղախանեան, Երեմ եւ Մագի Յարութիւնեաններ, Սեդա Ալազեան, Խաչատուր Ղազարեան, Վազգէն եւ Վանուհի Խուդավերդեաններ, Էլիզ Խաչիկեան՝ Սարինէի յիշատակին, Այի Բաբումեան, Ալէնուշ Սիմոնեան, Քեփն Մինաս Խաչիկեան, Արփա Տէր-Մարտիրոսեան, Էմելի Աբրահամեան, Հրաչ Մուրադեան, Հերմինէ Թահմազեան, Մինուշ Մարգարեան, Լուսիկ Յարութիւնեան, Վարդան եւ Ռիտա Մկրտչեաններ, Ռոլանդ եւ Ժանեթ Ղարախանեաններ, Սարգիս եւ Գէորգ Ղազարեաններ, Թորգոմ եւ Աստղիկ Բարսեղեաններ, Սեակ եւ Սերինէ եւ Անաբէլ, Սուլթան Թորոսեան, Իդա Ղազարեան, Վարդուշ Ջարգարեան՝ Սաքօ Ջարգարեանի յիշատակին, ոմն

-150,000-ական դիալ. Նազար Ծահվերդեան, Թամար Գրիգորեան, Սուլթան Թորոսեան, Արէն եւ Արփա Մարգարեաններ, Աբգար Ղազարեան, Վիգէն Ղազարեան, Սանդուխտ Հայրապետեան, Սերինէ Յակոբեան, Անդրանիկ Յովսէփեան, Արեգնազ Տէր-Յովհաննիսեան, Արմէն Յովսէփեան

-100,000-ական դիալ. Լորիկ Բաղդասարեան, Ծովիկ Իսախանեան, Համօ Տէր-Ստեփանեան, Օրբէլ-Էդուարդ Տէր-Եղիշեան, Անուշ Սարգսեան, Խաթունիկ Խաչիկեան, Ռազմիկ Վարդապետան, Ժենիկ Քեշիշեան, Բիւրեղ Ջոհրաբեան, Մասիս Ծահբազեան, Մարգարեան, Թադէոս Աբրահամեան, Մերի Աղախանեան, Կարէն եւ Սիլա Աւետեաններ, Անուշ Դաւթեան, Նորվան Ծահիջանեան՝ Մատթէոս եւ Անուշ Իսաղուպեանների յիշատակին, Սինթիա Պողոսեան՝ Մատթէոս եւ Անուշ Իսաղուպեանների յիշատակին, Արփինէ Լալազարեան, Բալիկ Մարտիրոսեան, Գէորգ Յովսէփեան, Դիանա Ծատուրեան, Քեփն Օհանեան, Ոմն

-50,000 դիալ. Արմէն Գաբրիէլեան

-1 ԱՄՆ դոլար. Քազէմի

Լուսահանգատի նւիրատուքիւններ

-1,000,000 դիալ. Նորիկ Մարկոսեան

-500,000-դիալ. Սերօ եւ Լուսինէ Ղազարեաններ, Վազգէն Մինասեան, Անեթ Ղազարեան, Մադլէն Ղարիբեան, Հերոս Սիմոնեան, Սելին եւ Կարէն Ղարիբեաններ, Տիգրանուհի Մանսուրեան, Յակոբեան ընտանիք, Սօսէ Մարկոսեան, ոմն

-300,000-դիալ. Յովհաննէս Խուդավերդեան, Յարութ Ղուկասեան՝ իր ծնողների՝ Փիլիկ եւ Արեւիկ Ղուկասեանների յիշատակին

-200,000-ական դիալ. Անդրանիկ Ասատրեան, Գեփիկ Ասատրեան, Արաքս Բաղումեան, Արգին եւ Վանէ Մեսրոպեաններ, Յասմիկ Տէր-Մարտիրոսեան, Տաթևիկ Տէր-Մարտիրոսեան

-100,000-ական դիալ. Երանդ Խաչիկեան, Բաղդասար

Ծահնազարեան, Անիթա Մուրադեան, Մարինէ Միսիթարեան -50,000 դիալ. Ոմն

Հանգուցեալ Ղազար (Ամիրխան) Ղազարեանի յիշատակին

-2,000,000 դիալ. Հայկազ Ղազարեան եւ ընտանիք

-500,000-ական դիալ. Ս. Գրիգոր Լուսատրիչ եկեղեցու կանանց յանձնախումբ. Սնկերտ գիւղի եկեղեցու վարչութիւն. Արթին Դաւթեան, Անդրանիկ Ղազարեան, Վազրիկ Մարկոսեան, Ջաւէն եւ Հերիքնազ Խաչիկեաններ

-400,000-ական դիալ. Յարութ եւ Հրանուշ Քեշիշեաններ. Հայրապետ Եսայի

-300,000-ական դիալ. Սթելա Ղարիբեան, Տիգրանուհի Ղեւեան, Սուսանբար Ղազարեան, Վահիկ Գուրգէնեան, Ալֆրեդ եւ Խաթունիկ Բաբումեաններ

-250,000 դիալ. Զօրիկ եւ Աքալլետ Յարութիւնեան

-200,000-ական դիալ. «Շուշանիկ» երգչախումբ եւ Կանանց հոգետր լսարան, Աննիկ Քեշիշեան, Մատթէոս Խաչիկեան, Պետրոս Խաչիկեան, Մարջիկ Մինասեան, Մասիս Քեշիշեան, Սոնիկ Կիրակոսեան

-150,000 դիալ. Արուսեակ Պողոսեան

-100,000-ական դիալ. Տիգրան Քեշիշեան, Լուսիկ Յովսէփեան, Վարդանուշ Յովսէփեան

Հանգուցեալ Աւետիս Օհանեանի յիշատակին

-500,000-ական դիալ. Յասմիկ Խուդաբախշեան, Ռազմիկ Մկրտչեան

-300,000 դիալ. Կարօ եւ Անահիտ Քիվիշեաններ

-250,000-ական դիալ. Վարդգէս Պետրոսեան

-100,000 դիալ. Ոլգա Ղարախանեան

Հանգուցեալ Հռիփսիմա Ռոստամեան-Փանոսեանի յիշատակին

-2,000,000 դիալ. Արմէն Փանոսեան

-600,000 դիալ. Սոնիա Քամարզարեան

-500,000-ական դիալ. Հայուհեաց Բարեգործական ընկերութիւն, Ծովինար եւ Յովսէփ եւ Անուշ Լալազարեաններ, Արմինէ Փանոսեանի ընկերուհիներ, Հայրիկ եւ Էլմա Խաչատրեաններ

-300,000-ական դիալ. Հայ Ուս. Չհարմախալ միութիւն, Արմոնդ եւ Ադլին Ալեքսանդրեաններ, Լեոն եւ Սեդիկ Պողոսեաններ

-200,000-ական դիալ. «Կատարիկեան» դպրոցի անձնակազմ, Ծանթ Աբգարեան, Սաթօ Կիրակոսեան, Նինա Խաչատրեան, Ջահանդար

-150,000 դիալ. Մինուշ Մելիքեան

-100,000-ական դիալ. Դիանա Փանոսեան, Աուկ եւ Սանդրա Խուդաբախշեաններ

Հանգուցեալ Մարօ Ղազարեան-Դաւթեանի յիշատակին

-1,000,000-ական դիալ. Քլար Խաչաքեան, Յովիկ եւ Մասիս եւ Արթին

-500,000 դիալ. Արարատ եւ Եղինէ Դաւթեաններ

-300,000-ական դիալ. Յակոբ Մարկոսեան, Մելանիաի ընկերուհիներ, Հրաչ եւ Ժանեթ Դաւթեաններ

-250,000 դիալ. Արտուշ և Մարգարիտ Սիրջանեաններ
-200,000-ական դիալ. Գառնիկ Թորոսեան, Հայկազ Դաւթեան

-150,000-ական դիալ. Ասլան Սարեան, Երանդ Խաչիկեան
-100,000 դիալ. Իւդաբեր Մանուկեան

Հանգուցեալ Մարօ Ղազարեան-Դաւթեանի յիշատակին

-1,000,000-ական դիալ. Սուլթան Թորոսեան, Վրէժ Մինասեան

-500,000-ական դիալ. Ալէն և Իգաբէլ Զարդն Դաւուդներ, Արաքս Պողոսեան, Ալեանշ Պողոսեան

-250,000-ական դիալ. Բալասան Ղարիբեան-Դիլանջեան, Մինաս Թահմազեան, Մասիս և Այիրա Մինասքանեաններ, Ժիրայր և Մելինա Ղարիբեաններ

-200,000-ական դիալ. Հայկազ և Հրանուշ Ղարիբեաններ, Մարօ Բաղումեան-Ղարիբեան, Ծաղկուշ Յովսէփեան

-150,000 դիալ. Վարդուշ Յովսէփեան

Հանգուցեալ Վարդանուշ Սկրտչեան-Յովսէփեանի յիշատակին

-1,000,000-ական դիալ. Վրէժ և Սիլա Յովսէփեաններ, Ալբերթ Ղազարեան

-500,000-ական դիալ. Ս. Ա. Վանքի «Տաթե» երգչախումբ, Զաւէն Փանոսեան, Մկրտիչ և Անիթա Աւետումեաններ, Արարատ Մելիքեան

-400,000 դիալ. Արմէն և Ուլասնա Յովսէփեաններ
-300,000-ական դիալ. Մարջան Մինասեան, Վազրիկ և Սիլա Մելքոնեաններ, Հրաչ Մուրադեան, Զանիկ և Նարինջ Ղազարեաններ, Աննա Քեչիշեան, Վազգէն և Անուշ Մարկոսեաններ, Սիմիկ Ղարախանեան, Վահիկ Փանոսեան, Ժիլբերթ Ղազարեան

-250,000 դիալ. Մինաս և Հրանուշ Թահմազեաններ
-200,000-ական դիալ. «Շուշանիկ» երգչախումբ և Վանանց հոգեւոր յարան, Գալստան Ղազարեան,
-150,000 դիալ. Մասիս Ծախբազեան
-100,000-ական դիալ. Համասիիտ Մարգարեան, Մասիս Մկրտչեան, Սիրվարդ Թորոսեան, Զաւէն Խաչիկեան, Երանդ Խաչիկեան

Հանգուցեալ Բարսեղ Փափեանի յիշատակին

-1,000,000 դիալ. Տիգրանուհի Ղարիբեան
-200,000 դիալ. Հայրուկ Մարգարեան
-150,000 դիալ. Վահիկ Ալազեան

Հանգուցեալ Կարօ Քիվիջեանի յիշատակին

-300,000-ական դիալ. Մինուշ Մելիքեան, Միքայէլ Զոհրաբեան, Վաչիկ Խուդաբախշեան

-200,000-ական դիալ. Մոսիկ Խաչիկեան, Պերնիկ Քամարզարեան
-150,000 դիալ. Ասուկ և Աննորա Խուդաբախշեաններ
-100,000-ական դիալ. Մասիս Մկրտչեան, Անուշ Սարգսեան, Համասիիտ Մարգարեան, Գրիշ և Ֆլոր Թորոսեաններ

Հանգուցեալ Արարատ Մարկոսեանի յիշատակին

-500,000-ական դիալ. Սեդրակ Դեհբաշեան, ոմն

-300,000 դիալ. Յակոբ Մարկոսեան
-200,000-ական դիալ. Եզնիկ Մարկոսեան, Ռազմիկ Մարկոսեան

-150,000 դիալ. Սիրվարդ Թորոսեան
-140,000 դիալ. Ծաղկուշ Աբէլեան
-100,000 դիալ. Համասիիտ Մարգարեան
-50,000 դիալ. Սամուէլ Ասատրեան

Հանգուցեալ Մարգարիտ (Մագի) Հերոսեանի յիշատակին

-500,000 դիալ. Սարօ Տէր Սուքիազեան
-300,000-ական դիալ. Հրաչ Ժիրանեան, Էլիզ Տէր Սուքիազեան, Նորայր և Ռուզան Թահմազեաններ

-200,000-ական դիալ. Արթին Քեչիշեան, Մանուշ Ծախբազեան

Հանգուցեալ Յովսէփ Տէր Յովհաննիսեանի յիշատակին

-300,000 դիալ. Յակոբ Մարկոսեան
-100,000-ական դիալ. Տ. Մետրոպ Ա. Քննչ Գալստանեան և երեցկին, Սրբուհի Թահմազեան

Հանգուցեալ Վարդան Խաչիկեանի յիշատակին

-200,000-ական դիալ. Աննիկ Քեչիշեան, Երանդ Խաչիկեան, Յովսէփ Աւետեան

Հանգուցեալ Մարգար (Սուլթան) Մինասքանեանի յիշատակին

-1,000,000 դիալ. Սուրէն Մինասքանեան
-300,000 դիալ. Մինուշ Մելիքեան
-200,000-ական դիալ. Մարջիկ Մինասեան, Հրաչ Մուրադեան

-150,000-ական դիալ. Ալֆրեդ Սիրջանեան, Լուսիկ Յարութեան, Արսէն Ծախբազեան
-100,000-ական դիալ. Բալաս Ղարիբեան, Ծախէն Օհանեան

Հանգուցեալ Բաֆֆի Սիմոնեանի յիշատակին

-500,000-ական դիալ. Նոր Զուղայի Հայոց Առաքելական եկեղեցեաց վարչութիւն, Ս. Գրիգոր Լուսաորիչ եկեղեցու կանանց յանձնախումբ, Յակոբ Մարկոսեան
-300,000-ական դիալ. Խորէն Մինասքանեան, Սաքօ Սիմոնեան, Անդրոն Սիմոնեան, Ժորժիկ և Քատուլին Մատթէոսեաններ

-250,000 դիալ. Թադէ Սիմոնեան
-200,000-ական դիալ. Սաթի և Սոնա Զարգարեաններ, Զարեմ Սիմոնեան

-150,000 դիալ. Սիրան Պողոսեան
-100,000 դիալ. Սաքօ Սիմոնեան

Հանգուցեալ Համբարձուժ Խուդաբախշեան-Յովհաննիսեանի յիշատակին

-1,000,000 դիալ. Զօրիկ և Անահիտ Յովսէփեաններ
-500,000-ական դիալ. Ս. Ա. Վանքի «Տաթե» երգչախումբի վարչութիւն, Վարուժ Մինասեան, Ռազմիկ Խուդաբախշեան, Ստեփան Մինասեան
-300,000-ական դիալ. Վահիկ և Լեոնիկ Ղազարեաններ, Նորիկ և Սոնա Յարութեաններ
-200,000-ական դիալ. Մարջիկ Մինասեան, Խաչիկ

Յովսէփեան, Յարութ Քեշիշեան, Համօ եւ Ռիթա Մկրտչեաններ, Անդրէ Մարկոսեան, Աննիկ Քեշիշեան, Մասիս Քեշիշեան, Սաթօ Կիրակոսեան, Վազգէն Մինասեան

-150,000-ական դիալ. Ալվարոյ Մկրտչեան, Տիգրան Քեշիշեան, Սիրվարդ Թորոսեան

-100,000-ական դիալ. Մասիս Մկրտչեան, Զաւէն Խաչիկեան, Վալենթին Դաւթեան, Մեհրի Ռոհմանի

Հանգուցեալ Նոյեմզար Ասլանեանի յիշատակին

-150,000 դիալ. Արամայիս Թահմազեան

Հանգուցեալ Անդրիաս Ամիրխանեանի յիշատակին

-200,000 դիալ. Շաքէ Ղարիբեան

Հանգուցեալ Ծաղիկ Բաբումեան-Թահմազեանի յիշատակին

-500,000-ական դիալ. Տիգրանուհի Ղեւեան, Մասիս եւ Ժենիկ Քեշիշեաններ

-300,000 դիալ. Հայ Ուս. Զհարմահալ Միութիւն

-200,000-ական դիալ. Պայծառ Սիմոնեան, Արա եւ Ռիմա Սարգսեաններ, Նինա Խաչատրեան, Ալֆրեդ եւ Խաթունիկ Բաբումեաններ, Գրիշ եւ Ֆլոր Թորոսեաններ

-150,000 դիալ. Համաս Մարգարեան

-100,000 դիալ. Արքունի Թահմազեան

Հանգուցեալ Պօղոս Քեշիշեանի յիշատակին

-500,000 դիալ. Սեւան Ղազարեան

-100,000 դիալ. Շուշան Թահմազեան

Հանգուցեալ Հրանուշ Առաքելեանի յիշատակին

-1,000,000 դիալ. Աշխէն Մկրտչեան

-150,000 դիալ. Համաս Մարգարեան

-100,000-ական դիալ. Երանուշ Թահմազեան, Իշխան Թահմազեան

Ն.Զ. Հայոց ազգային գերեզմանասան բարեկարգման մարմին

-1,000,000-ական դիալ. Տէր-Մկրտչեան ընտանիք՝ Նվարդ Իսաղուլեանի յիշատակին, Արուսեակ Պօղոսեան՝ Աշոտ Գուրգէնեանի յիշատակին, Թելմա Հայրապետեան՝ Ժորժ Հայրապետեանի յիշատակին, Սուրէն Սէթ-Աղայեան ընտանեօք՝ Հերոս եւ Վազգէն Սէթ-Աղայեանների յիշատակին

-850,000 դիալ. Արին Նազարեան

-500,000-ական դիալ. Քառուղի եւ Վազրիկ Վարդանեաններ, Վարուժ Վարդանեան, Անի եւ Արփի Յակոբեաններ, Մարօ Տէր-Սարգսեան՝ Ղուկաս Նորավեանի յիշատակին, Անդրէ Քալանթար-Օհանեան, Վազրիկ Միրզախանեան, Համիկ Ալեքսանդրեան, Վազրիկ Մարկոսեան, Վարդան Ալեքսանդրեան՝ Հիլդա Մարգարեանի յիշատակին, Վարդան Ալեքսանդրեան՝ Տիգրան եւ Շուշան Ալեքսանդրեանների յիշատակին, Վարդան Ալեքսանդրեան՝ Զաքար եւ Արփեհիկ Մարգարեանների յիշատակին, Արա Թորոսեան, Բալիկ Թահմազեան, Ուրֆա եւ Արփա եւ Անիս Անդրիասեաններ, Պօղոս Թահմազեան, Սուրէն Մինասեան, Սերժիկ Բաղդամեան, ոմն

-300,000 դիալ. Տ. Խաչատուր քնյ. Զարգարեան

-200,000-ական դիալ. Յարութ Կիրակոսեան, Յակոբեան ընտանիք, Օրբէլ Յակոբեան, Նորիկ Յարութիւնեան, Էմանուէլ

Ասատրեան

-110,000 դիալ. Սեդա Ալազեան

Ն.Զ. Հայոց ազգային «Քանանեան» դպրոց

«Սպահան՝ իմ գեղեցիկ քաղաք» ցուցահանդէսի առթիւ

-2,000,000 դիալ. Լորթթա Յակոբեան՝ իր հօր Յարութ Յակոբեանի յիշատակին

-1,000,000-ական դիալ. Անուշիկ Դիլանջեան, Արմինէ Թորոսեան

Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութիւն

-5,000,000 դիալ. Պրն. Արամազդ Խաչեան

Յուլիս 27-ի յուշերեկոյի առթիւ

-500,000-ական դիալ. Սիսիան Քալանթար- Օհանեան, Արութիւն Քալանթար-Օհանեան, Արփիար Դաւթեան

-400,000 դիալ. Ադրիան Մկրտչեան

-200,000 դիալ. Լէօ Շահիջանեան

Մշակոյթի շաբաթւայ նւիրած ձեռնարկի առթիւ

-1,000,000 դիալ. Հայ Դատի Յանձնախումբ

-500,000-ական դիալ. Փերիոյ կրթասիրաց միութիւն, Ն.Զ. Հայուհեաց Բարեգործական ընկերութիւն

«Կռուճիկ» պարահմբի տարեկան ելոյթի առթիւ

-50,000,000 դիալ. Սպահանի հայոց թեմի Թեմական խորհուրդ

-2,000,000 դիալ. Հայ Դատի յանձնախումբ

-1,000,000-ական դիալ. Ս.Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախումբ, Ն.Զ. Հայ Կանանց Գթութեան միութիւն, Ալլին Մելիքեան

-700,000 դիալ. Փերիոյ կրթասիրաց միութիւն

-500,000-ական դիալ. Հայոց ազգային «Արմէն» կրթահամալիր, Ս.Ա. Վանքի «Տաթեւ» երգչախումբ, Հայ ուս. Զհարմահալ միութեան Ն.Զ. մասնաճիւղ, Համիկ Ալեքսանդրեան, Արքի Բաբումեան

-400,000-ական դիալ. Հայոց Ազգային «Կատարիւնեան» դպրոց, Քրիստինէ Յակոբեան

29-րդ Գարնանային Խաղերի բացման արարողութեան առթիւ

-1,500,000 դիալ. Մենուա Քեշիշեան

-1,000,000-ական դիալ. Ռուբէն Խաչիկ-Գրիգորեան, Նորիկ Պօղոսեան, Նարբէլ Քոչարեան, Նարեկ Միրզալեան,

-500,000-ական դիալ. Ն.Զ. Հայ Կանանց Գթութեան միութիւն, Ն.Զ. Հայուհեաց Բարեգործական ընկերութիւն, Փերիոյ կրթասիրաց միութիւն, Հայ ուս. Զհարմահալ միութիւն, Մասիս Սիրջանեան, Արման Ալեքսանդրեան, Անի Սիմոնեան, Սեդիկ Ալազեան, Թէա Թահմազեան, Վարուժ Մինասեան, Անիս Թորոսեան

-400,000 դիալ. Մինաս Թահմազեան

-300,000-ական դիալ. Անգիլնէ Ղազարեան, Արգամ Թորոսեան, Վանանդ Իսաղուլեան

-250,000 դիալ. Նոռա Շահիջանեան

-200,000 դիալ. Ռուբէն Զանի

Ն.Զ. Հայ Կանանց Գթութեան Միութիւն (Կարմիր Խալ)

-31,000,000 դիալ. Զահանգիրի

-5,000,000-ական դիալ. Արութիւն Աղախանեան, Յարութ Յակոբեան

-4,000,000 դիալ. Հրաչիկ Ղարիբեան-Եսայեան

- 3,000,000 ուիալ. Յարութ Անջուլեան
- 1,000,000 ուիալ. Վարդգէս Պետրոսեան՝ Կարօ Քիվիջեանի յիշատակին
- 600,000 ուիալ. Մահմուդիէ
- 500,000-ական ուիալ. Արաքս Աբեղի, Ռազմիկ եւ Ժանգեթ Իւնիքեաններ
- Սնունդ եւ սննդամթերք. «Արմէն» կրթահամալիրի ծնողական խորհուրդ, ոմն պարսկուհի
- Թխածքներ. «Արմէն» կրթահամալիրի ծնողական խորհուրդ, Հայ Ուսում. Չհարմահալ միութիւն, Սերժ Ոսկանեան, ոմն
- Քաղցրաւենիք. Սպահանի բարեկեցութեան հիմնարկ, Շահիդ Մոնթազերի ընդունելութեան հիմնարկ, Արաքս Աբեղի, Հրաչիկ Ղարիբեան
- Սուրճի հիւրասիրութիւն. Պերճիկ Շֆրազ Էբրահիմի, Դերենիկ Աղախանեան, Ժենիկ Տէր-Գրիգորեան
- Ծաղիկ. Սպահանի բարեկեցութեան հիմնարկ, Շահիդ Մոնթազերի ընդունելութեան հիմնարկ, Շահրիար, Լոթոս ծաղկավաճառ

Հայ ուս. Զհարմահայ Միութեան Ն. Զ. մասնաձիւղ

- 1,000,000 ուիալ. Լինդա Եադգարեան
- 500,000-ական ուիալ. Տ. Խաչատուր քինյ. Ջարգարեան, Յուլակ Յարութիւնեան, Արմէն եւ Ալեհոյշ Նաւասարդեաններ
- 400,000-ական ուիալ. Համասփիւռ Մարգարեան, Մինաս Թահմազեան
- 200,000-ական ուիալ. Արմինէ Ղարախանեան, Արմինէ Փանոսեան

*Առաջնորդարանին եւ ազգային կառույցին աւրընչ-
 ւող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում
 է Ազգային Առաջնորդարանի Հանրային Կապի գրա-
 սենեակը, համայնքային եւ կրօնական արարողու-
 թիւններինը՝ «Այլք»-ի թղթակիցները, «Արարատ»
 Միութեանը՝ Երանուշ Թահմազեանը, Շահինչահրի
 հայ համայնքինը եւ տեղի «Արարատ» Միութեան
 մասնաճիւղինը՝ Վիտլիթ Յարութիւնեանը եւ Աի-
 դա Մուրադեանը:*

*Որոշ լուսանկարներ տրամադրում է Գեւիկ
 Խաչատրեանը:*

ՄԵՐ ՀԱՍՅԷՆ

خليفه گری ارامنه اصفهان و جنوب ایران
 صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵
 Armenian Cathedral - P.O.Box 81735-115
 New - Julfa, Isfahan, Iran
WWW.Norjugha.ir
WWW.Vank.ir
 E-mail: Sourbv@Yahoo.com
 Tel: +98-31-36243471-2
 Fax: +98-31-36270999

